



Արժեթղթի գրանցման հայտարարագիր

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

«ՎԱԼԼԵՏՏԱ»

(թողարկողի անվանումը, (անուն, ազգանունը))

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

(կազմակերպական - իրավական ձևը)

թողարկողի պետական գրանցման ամսաթիվը 12.12.2003թ.

առաջարկում է գրանցել անվանական արժեկտրոնային պարտատոմս
(նշվում է արժեթղթերի դասը (տեսակը,))

արժեթղթերի ձևը ոչ փաստաթղթային, արժեթղթերի քանակը 7,000 (յոթ հազար) հատ

անվանական արժեքը 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ

թողարկողի գործունեության հիմնական տեսակը մանրածախ և մեծածախ առևտուր, հանրային սննդի սպասարկման ծառայություններ

Թողարկված (տեղաբաշխված) է համաձայն Մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի 19.06.2007թ. որոշման

(նշվում է արժեթղթերի թողարկման մասին որոշում ընդունող իրավասու մարմնի անվանումը և որոշման ընդունման ամսաթիվը)

Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք.Կապան, Բաղարբերդ 2ա, բն. 2,

Գործունեության վայրը՝ ՀՀ, ք.Երևան, Աերացիա 1,

Հեռախոս՝ (+374 10) 46 74 10, Ֆաքս՝ (+374 10) 46 74 00,

Էլ-փոստ՝ valletta@valletta.am, ինտերնետային կայքը՝ www.valletta.am

(նշվում է թողարկողի գտնվելու վայրը, փոստային հասցեն և կայքի միջոցները)

Մենք հավաստիացնում ենք, որ սույն հայտարարագրում պարունակվող տեղեկությունները ստույգ են և լիակատար գիտակցում ենք, որ նրանում որևէ էական փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը կարող է հանգեցնել հայտարարագրի գրանցման մերժմանը և(կամ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցների կիրառմանը:

ստորագրող անձինք՝

Հենրիկ Զախարյանց	Ժողովի նախագահ		29.06.2007թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Համլետ Դաշյան	Ժողովի քարտուղար		29.06.2007թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Շահեն Ստեփանյան	Տնօրեն		29.06.2007թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Սամսոնյան	Գլխավոր հաշվապահ		29.06.2007թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ստորագրությունները վավերացնում են՝			
Շահեն Ստեփանյան	Տնօրեն		29.06.2007թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Կ.Տ.

Արժեթղթերի ազդագիր

«ՎԱԼԼԵՏՏԱ»

(թողարկողի անվանումը (անուն, ազգանունը))

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

կազմակերպական - իրավական ձևը

անվանական ոչ փաստաթղթային արժեկտրոնային պարտատոմս

(արժեթղթերի դասը (տեսակը) և ձևը)

արժեթղթերի քանակը **7,000 (յոթ հազար) հատ**

անվանական արժեքը **50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ**

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿՐՈՒՄ ՍՈՒՅՆ ԱԶԴԱԳՐՈՒՄ ԶԵՏԵՂՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՍԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՃՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ: ԳՐԱՆՑՄԱՆ ՓԱՍՏԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ:

Պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Q \cdot Q = N / (1 + t \cdot R / m) \cdot (c \cdot \sum 1 / (1 + R)^{j-1} + 1 / (1 + R)^{n-1})$$

որտեղ՝

Q·Q – Պարտատոմսի տեղաբաշխման գինն է,

N – Պարտատոմսի անվանական արժեքն է,

R – Պարտատոմսի դիմաց վճարվող կիսամյակային տոկոսադրույքի բացարձակ արժեքն է,

t – մինչև տվյալ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակն է,

m – ընթացիկ կիսամյակում ընդգրկված օրերի քանակն է,

c – կիսամյակային վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է,

n – արժեկտրոնների վճարումների քանակն է,

j – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոփոխվում է տվյալ պահից մինչև վերջնական մարում մնացած արժեկտրոնների վճարումների քանակից կախված:

Պարտատոմսերի տարեկան տոկոսադրույքը 10.5% է: Պարտատոմսերով նախատեսվում է կիսամյակային արժեկտրոնների վճարում՝ 5.25%-ի չափով: Պարտատոմսերի վաճառքից հասույթը նախնական հաշվարկներով կազմում է 350,000,000 (երեք հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ:

Բաժնային արժեթղթերի սեփականատերեր, որոնք առաջարկում են իրենց պատկանող արժեթղթերի վաճառքը, առկա չեն:

Տեղաբաշխողներ՝

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն
(Գլխավոր տեղաբաշխող)

«Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն
(Տեղաբաշխման խմբի անդամ)

«Զարգացման Հայկական Բանկ» բաց բաժնետիրական ընկերություն
(Տեղաբաշխման խմբի անդամ)

«Ֆյուչըր Կապիտալ Մարկետ» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերություն
(Տեղաբաշխման խմբի անդամ)

ARMSWISSBANK
Private & Investment Banking


CONVERSE BANK



FCM
Investment Company

Ազդագրում ներառված տեղեկությունների ցանկը

Տեղեկությունների ամփոփ նկարագիր.....	4
Ռիսկային գործոններ	5
Գ-ԼՈՒԽ 1. Թողարկողի մասին ընդհանուր տեղեկություններ.....	7
Գ-ԼՈՒԽ 2. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարմանը մասնակցող անձինք	13
Գ-ԼՈՒԽ 3. Թողարկողի բաժնային արժեթղթերի նշանակալից, բայց ոչ խոշոր սեփականատերերի մասին տեղեկություններ.....	18
Գ-ԼՈՒԽ 4. Թողարկողի հետ փոխկապակցված անձանց մասին տեղեկություններ	18
Գ-ԼՈՒԽ 5. Տեղեկություններ թողարկված արժեթղթերի վերաբերյալ	19
Գ-ԼՈՒԽ 6. Թողարկողի ֆինանսական վիճակի մասին տեղեկություններ.....	22
Գ-ԼՈՒԽ 7. Տեղեկություններ թողարկողի գործունեության վերաբերյալ	30
Գ-ԼՈՒԽ. 8. Տեղեկություններ թողարկողի նախատեսվող գործունեության մասին	39
Գ-ԼՈՒԽ 9. Թողարկվող (առաջարկվող) արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ.....	40
Հավելված. Ֆինանսական հաշվետվություններ	45

Տեղեկությունների ամփոփ նկարագիր

«Վալլետտա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Թողարկող) իրավանախորդ «ՄԻՋՆԱՎԱՆ» ՍՊԸ-ն Հայաստանում գործունեությունը սկսել է ծավալել դեռևս 1990 թվականից, իսկ Թողարկողը հիմնադրվել է 2003 թվականին, որից հետո նույն թվականին «ՄԻՋՆԱՎԱՆ» ՍՊԸ-ն միացել է Թողարկողին: 2005թ.-ին Թողարկողին է միացել նաև «ՍԱԹԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ» ՍՊԸ-ն, իսկ 2006թ.-ին Թողարկողը վերակազմակերպվել է՝ նրանից նոր՝ «ՍԱԳՆԵՏԻԿ» ՍՊԸ-ի առանձնացման արդյունքում: Նշված միացումների և առանձնացումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը տես սույն ազդագրի «Թողարկողի մասին ընդհանուր տեղեկություններ» գլխի 1.2. և «Տեղեկություններ թողարկված արժեթղթերի վերաբերյալ» գլխի 5.2. կետերում:


Ներկայումս Թողարկողը զբաղվում է գործունեության բազմաթիվ տեսակներով, մասնավորապես՝ սննդամթերքի և կենցաղային տեխնիկայի մանրածախ և մեծածախ առևտրով, հանրային սննդի սպասարկման կետերի շահագործմամբ, մսամթերքի, սուրճի արտադրությամբ, թեյի փաթեթավորմամբ և այլն: Թողարկողի կողմից շուկայում ներկայացված են այնպիսի հայտնի ապրանքանիշեր, ինչպիսիք են Կոմֆորտ և Կոմֆորտ+ խանութների ցանցերը, Ariston և Ardo կենցաղային տեխնիկան, SFC և AFC արագ սպասարկման ռեստորանների ցանցը, Պլենեռ ռեստորանը, Պրեմիեր սուրճը, Բիելլա մսամթերքը և այլն:

Թողարկողը մշտապես հետևում է իր կողմից նախանշված առաքելությանը, այն է՝


- սպառողներին տրամադրել որակյալ արտադրանք,
- մատակարարների հետ ձևավորել սերտ հարաբերություններ,
- ապահովել անվտանգ, առողջ և որակյալ աշխատանքային պայմաններ,
- թողարկողի մասնակիցների համար տարեցտարի բարելավել ֆինանսական արդյունքները,
- միջազգային և տեղական ներդրողների համար ապահովել ֆինանսական բավարար թափանցիկություն,
- կատարելագործել Թողարկողի սեփականության համակարգը՝ կիրառելով ժամանակակից մոտեցումներ (աշխատակիցների բաժնետիրացում /partnership/),
- կիրառել պրոֆեսիոնալ մոտեցումներ և ապահովել կայուն դրական արդյունք տարբեր շուկայական պայմաններում,
- թե՛ ֆինանսական, թե՛ հասարակական շրջանակներում ստեղծել բարի համբավ:

Թողարկողի գործունեության ֆինանսական արդյունքների մասին համառոտ պատկերացում կարելի է կազմել ստորև ներկայացվող գծապատկերներից.

Իրացումից հասույթ, 2004-2006թթ, հազ. դր.



Չուտ շահույթ, 2004-2006թթ., հազ. դրամ



Գծապատկերներից պարզ է դառնում, որ չնայած հասույթի աճը 2004-2006թթ.-ին կայուն չի եղել, սակայն զուտ շահույթը ցուցաբերել է կայուն աճի միտում, ընդ որում, հասույթի աճն ուղեկցվել է զուտ շահույթի ավելի արագ աճով: Այսպես՝ 2006 թվականին 2004 թվականի համեմատությամբ հասույթի աճը կազմել է 10.3%, իսկ նույն ժամանակահատվածում զուտ շահույթն ավելացել է 136%-ով:

Եթե մինչ այժմ Թողարկողն իր ֆինանսական ռեսուրսների պակասը համարում էր տարբեր միջազգային և տեղական ֆինանսական կառույցներից ստացվող վարկերի հաշվին, ապա 2007 թվականին Թողարկողի կողմից ռազմավարական որոշում է ընդունվել՝ մուտք գործել արժեթղթերի շուկա և ներդրումային նախագծերի մի մասը ֆինանսավորել պարտատոմսերի թողարկման միջոցով:

Թողարկողի կողմից կարևորվում է այն հանգամանքը, որ 2007 թվականի փետրվարի 14-ին ՀՀ կենտրոնական բանկի կողմից Թողարկողին շնորհվել է «Բ -» վարկանիշ: Վերջինս համարվում է բարձր վարկանիշ, որը շնորհվել է Թողարկողի վարկային պատմության, ֆինանսատնտեսական վիճակի վերլուծության և գործունեության որակական գնահատականների հիման վրա:

Թողարկողին շնորհված «Բ -» վարկանիշը նշանակում է, որ Թողարկողի պարտատոմսերով ԿԲ-ն պատրաստակամ է ռեպո գործարքներ կնքել: Իսկ դա իր հերթին մեծապես կնպաստի պարտատոմսերի իրացվելիության ապահովմանը և ներդրողների համար պարտատոմսերի ձեռք բերման լրացուցիչ խթան կհանդիսանա:

Սույն ազդագրի շրջանակներում Թողարկողի կողմից նախատեսվում է թողարկել և տեղաբաշխել 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով 7,000 (յոթ հազար) հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ 350,000,000 (երեք հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով՝ 18 ամիս մարման ժամկետով և 10.5% տարեկան եկամտաբերությամբ: Պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում հավաքագրված գումարն ուղղվելու է կապիտալ ներդրումներին, շրջանառու միջոցների համարմանը, ինչպես նաև պարտքի վերակառուցմանը, մասնավորապես՝ վարկերի վերաֆինանսավորմանը:

Սույն ազդագիրը հասցեագրված է պոտենցիալ ներդրողներին, որոնք ցանկություն կունենան ներդրումներ կատարել Թողարկողի պարտատոմսերում, և նպատակ է հետապնդում բացահայտել Թողարկողի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը, որն իր հերթին հնարավորություն կստեղծի ներդրումային կշռադատված որոշումների կայացման համար:

Թողարկողի գործունեության և ֆինանսական վիճակի մասին մանրամասն և ամբողջական տեղեկությունները ներկայացված են ազդագրի հաջորդ բաժիններում:

Ռիսկային գործոններ

Պարտատոմսերում ներդրումները սովորաբար կապված են որոշակի ռիսկերի հետ: Հետևաբար ներդրողները մինչև ներդրումային որոշում ընդունելը պետք է հանգամանորեն վերլուծեն ներդրման հետ կապված ռիսկերը, ինչպես նաև ազդագրում ներկայացված այլ տեղեկատվությունը:

Նշված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է հանգեցնել Թողարկողի ֆինանսական դրության կամ շուկայական իրավիճակի վատթարացմանը, որն էլ Թողարկողի կողմից ստանձնած պարտավորությունների՝ լրիվ կամ մասնակի չիրականացման պատճառ կարող է դառնալ կամ որոշակի խոչընդոտներ առաջացնել ներդրողների համար հետագայում պարտատոմսերն իրացնելիս: Ներդրողները պետք է հաշվի առնեն նաև, որ ստորև ներկայացվող ռիսկերից բացի հնարավոր է նաև այլ խնդիրների առաջացումը, որոնք հետագայում կարող են անցանկալի հետևանք ունենալ Թողարկողի ֆինանսական դրության և պարտատոմսերի իրացվելիության վրա: Այնուամենայնիվ, Թողարկողի կողմից որպես առավել էական ռիսկեր դիտարկվում են հետևյալները.

- *Աճող մրցակցություն.* Թողարկողը գործունեություն է ծավալում մրցակցային շուկաներում, որտեղ նմանատիպ ապրանքներ և ծառայություններ են մատուցում բազմաթիվ այլ ընկերություններ: Բացի այդ, չի բացառվում նաև նոր և ավելի հզոր մրցակիցների ի հայտ գալու հավանականությունը: Նշված գործոնները կարող են բացասաբար ազդել Թողարկողի՝ շուկայում ըստ առանձին գործունեության ուղղությունների ունեցած մասնաբաժնի վրա, ինչն իր հերթին էական ազդեցություն կարող է ունենալ Թողարկողի

Ֆինանսական արդյունքների վրա: Այնուամենայնիվ հարկ է նշել, որ Թողարկողը վարում է արդյունավետ գնային և մարկետինգային քաղաքականություն, ինչի շնորհիվ մինչ օրս շուկայում իր կայուն տեղն է զբաղեցնում:

- *Աշխարհաքաղաքական ռիսկեր.* աշխարհաքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է առաջ գան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ տրանսպորտային ուղիների և երկրում ընդհանուր տնտեսական իրավիճակի վրա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թողարկողի գործունեության մեջ զգալի տեղ է զբաղեցնում ներմուծվող ապրանքների մանրածախ և մեծածախ առևտուրը, վերոնշյալը կարող է բացասաբար անդրադառնալ Թողարկողի իրացման ծավալի վրա:
- *Ինֆլյացիոն ռիսկ.* երկրում սղանի բարձր մակարդակի առկայության պարագայում Թողարկողի կողմից իր պարտատոմսերի դիմաց առաջարկվող եկամտաբերությունը կարող է դառնալ ոչ շահավետ:
- *Արտարժութային ռիսկ.* Թողարկողի գործառնությունների մեծ մասն իրականացվում է արտարժույթով, հետևաբար արտարժութային փոխարժեքների զգալի տատանումները կարող են մեծ ազդեցություն ունենալ Թողարկողի ֆինանսական արդյունքների վրա (ինչպես դրական, այնպես էլ բացասական):
- *Նորմատիվ և օրենսդրական դաշտի փոփոխություններ.* ինչպես արդեն նշվեց, Թողարկողի գործունեության մեջ մեծ տեղ է գրավում ներմուծվող ապրանքների մատակարարումը, հետևաբար ներմուծվող ապրանքներին վերաբերող մաքսային կանոնների անբարենպաստ փոփոխությունները բացասական ազդեցություն կարող են ունենալ Թողարկողի շահույթի վրա:
- *Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ.* ՀՀ-ում կորպորատիվ պարտատոմսերի շուկան դեռևս գտնվում է կազմավորման փուլում, և բացակայում է այս գործիքների ակտիվ երկրորդային շուկան: Հետևապես, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ իր կողմից թողարկված պարտատոմսերը ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել իրենց համար շահավետ գնով: Ֆինանսական շուկայում տոկոսադրույքների տատանումները ևս բացասաբար կարող են ազդել պարտատոմսերի եկամտաբերության և իրացվելիության վրա:

ԳԼՈՒԽ 1. Թողարկողի մասին ընդհանուր տեղեկություններ

1.1. Թողարկողի ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՎԱԼԼԵՏՏԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
անգլերեն՝ “VALLETTA” Limited Liability Company
ռուսերեն՝ Общество с ограниченной ответственностью “ВАЛЛЕТТА”

Թողարկողի կրճատ անվանումն է՝

հայերեն՝ «ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ
անգլերեն՝ “VALLETTA” LLC
ռուսերեն՝ ООО “ВАЛЛЕТТА”

Թողարկողի ֆիրմային անվանումը նման է Ծաղկաձորում գտնվող «Վալետա» հանգստյան տան անվանմանը: Թողարկողը տվյալ ընկերության հետ որևէ կերպ փոխկապակցված չէ:

1.2. Թողարկողի կազմակերպական-իրավական ձևն է՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ գրանցված 12.12.2003թ.: Թողարկողը ստեղծվել է «ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ-ի միակ հիմնադրի 11.12.2003թ. որոշման համաձայն:

«ՄԻՋՆԱՎԱՆ» ՍՊԸ մասնակիցների և «ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ մասնակիցների 29.12.2003թ. կայացած համատեղ ընդհանուր ժողովի որոշման համաձայն՝ կատարվել է «ՄԻՋՆԱՎԱՆ» ՍՊԸ միացում Թողարկողին: Թողարկողը հանդիսանում է «ՄԻՋՆԱՎԱՆ» ՍՊԸ (գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 18.01.2001թ., գրանցման թիվ՝ 27.110.00935, վկայական՝ 02 Ա 049435) իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

«ՍԱԹԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ» ՍՊԸ մասնակիցների և «ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ մասնակիցների 23.05.2005թ. կայացած համատեղ ընդհանուր ժողովի որոշման համաձայն կատարվել է «ՍԱԹԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ» ՍՊԸ միացում Թողարկողին: Թողարկողը հանդիսանում է «ՍԱԹԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ» ՍՊԸ (գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 15.10.2004թ., գրանցման թիվ՝ 222.110.00416, վկայական՝ 03 Ա 066292) իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

Թողարկողի մասնակիցների 03.03.2006թ. կայացած արտահերթ ընդհանուր ժողովի որոշման համաձայն Թողարկողը վերակազմակերպվել է՝ նրանից «ՍԱԳՆԵՏԻԿ» ՍՊԸ-ի առանձնացման ճանապարհով:

1.3. Թողարկողի պետական գրանցման համարն է՝ 27.110.01163: Թողարկողի առաջին գրանցման ամսաթիվն է՝ 12.12.2003թ., իսկ վերջին գրանցման ամսաթիվն է՝ 02.05.2007թ. (ներդիր 009՝ նոր խմբագրությամբ կանոնադրություն):

1.4. Թողարկողը տարբեր իրավասու մարմինների կողմից ստացել է համապատասխան գործունեությունների իրականացման հետևյալ լիցենզիաները.

Ա. ՀՀ կենտրոնական բանկի 2006 թվականի մարտի 11-ի թիվ 154Ա որոշմամբ Թողարկողին տրվել է Արտարժույթի առքուվաճառքի թիվ 691 լիցենզիան՝ ք.Երևան, Տիգրան Մեծի պողոտա, շենք 37 հասցեում արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելու համար: Լիցենզիան տրված է անժամկետ:

Բ. ՀՀ կենտրոնական բանկի 2006 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 586Ա որոշմամբ Թողարկողին տրվել է Արտարժույթի առքուվաճառքի թիվ 691/1 լիցենզիան՝ ք.Երևան, Դավիթ Անհաղթի 21 հասցեում արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելու համար: Լիցենզիան տրված է անժամկետ:

Գ. «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ կողմից 2005թ. ապրիլի 22-ի թիվ 96/5 ակտի հիման վրա Թողարկողին տրվել է թիվ AST B01.C-0096-2005 համապատասխանության սերտիֆիկատը՝ ք.Երևան, Տիգրան Մեծի 12 հասցեում հանրային սննդի ծառայությունների մատուցման համար: Սերտիֆիկատն ուժի մեջ է մինչև 2008թ. ապրիլի 22-ը:

Գ. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 2001թ. նոյեմբերի 12-ին «Սիջնավան» ՍՊԸ-ին տրվել է սննդամթերքի արտադրության թիվ ՊԼ-074 լիցենզիան: Համաձայն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.02.2004թ. թիվ 96-Ա հրամանի՝ վերոնշյալ լիցենզիան վերաձևակերպվել է «ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ անունով: Լիցենզիայի գործողությունն անժամկետ է:

1.5. Թողարկողին հարկային մարմնի կողմից հատկացված հարկատու անձի հաշվառման համարն է՝ 09416197 տրված 12.12.2003թ. Կապանի տարածքային հարկային տեսչության կողմից:

1.6. Թողարկողի համար ՀՀ դրամով և արտարժույթով բանկային հաշիվներ են բացված հետևյալ բանկերում՝ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան, ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ, Հայէկոնոմբանկ, ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ, ԲՏԱ-Ինվեստբանկ և Կոնվերս բանկ:

1.7. Թողարկողն ունի 1 մասնաճյուղ՝ «ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ ԼՂՀ մասնաճյուղը, որը ստեղծվել է 2004 թվականի ապրիլի 12-ին՝ Թողարկողի մասնակիցների 06.04.04թ. կայացած արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 4 որոշման համաձայն, և գտնվում է ԼՂՀ Քաշաթաղի շրջան, ք. Բերձոր նախկին կ.թ. շենք 3/48 հասցեում: Մասնաճյուղի տնօրենն է Արա Ստեփանյանը, որի լիազորություններն անժամկետ են:

1.8. Թողարկողը չի հանդիսանում որևէ կազմակերպության բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր:

1.9. Թողարկողի 2004-2006թթ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «Սոս-Աուդիտ» ՍՊԸ-ն, որը տրամադրել է իր եզրակացությունը 2007թ. մայիսի 17-ին: «Սոս-Աուդիտ» ՍՊԸ հասցեն է՝ ք. Երևան, Կոմիտասի պող. 55, բն. 42, հեռ.՝ (010) 27-57-83, էլ. փոստ՝ sosaudit@yandex.ru: Ընկերության տնօրենն է Մանվել Դազարյանը:

Փորձագետներ կամ խորհրդատուներ, որոնց կարծիքն օգտագործվել է հայտարարագրում, չկան: Թողարկողին պարտատոմսերի թողարկման նախապատրաստման, այդ թվում՝ պարտատոմսերի ազդագրի և պարտատոմսերի գրանցման հայտարարագրի կազմման հարցերում խորհրդատվական ծառայություններ է մատուցել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն՝ համաձայն 13.02.2007թ. կնքված IB/07-002 պայմանագրով:

1.10. Թողարկողը արդյունաբերական, բանկային, ֆինանսական խմբերում, հողինգներում, կոնցեռններում և միություններում մասնակցություն չունի:

1.11. 2007 թվականի հունիսի 25-ի դրությամբ Թողարկողն ունի 269 աշխատակից, որից 43-ն ընդգրկված են վարչական ապարատում: Հարկադիր պարապորդում գտնվող աշխատակիցներ չկան:

1.12. Թողարկողի կանոնադրական կապիտալը կազմում է 518 400 000 (հինգ հարյուր տասնութ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, որը վճարված է 100%-ով:

1.13. Թողարկողի բաժնեմասերի սեփականատերերը 2-ն են: Թողարկողը այլ բաժնային արժեթղթեր չունի:

1.14. Ստորև ներկայացված են Թողարկողի հիմնական միջոցների վերաբերյալ ընդհանուր տեղեկությունները՝ 31.12.2006թ. դրությամբ.

N	Հիմնական միջոցի անվանումը	Սկզբնական արժեք	Մաշվածություն	հազ. ՀՀ դրամ
				Հաշվեկշռային արժեք
1.	Մեքենասարքավորումներ,	76,508	12,923	63,585

N	Հիմնական միջոցի անվանումը	Սկզբնական արժեք	Մաշվածություն	Հաշվեկշռային արժեք
	համակարգիչներ			
2.	Տրանսպորտային միջոցներ	117,071	42,242	74,829
3.	Արտադրատնտեսական գույք	10,953	6,800	4,153
4.	Այլ հիմնական միջոցներ	10,184	2,894	7,290
5.	Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ	122,598	34,812	87,786
	Ընդամենը	337,314	99,671	237,643

Գույքի օգտակար ծառայության գնահատված միջին ժամկետները հետևյալն են.

- Մեքենասարքավորումներ՝ 5 տարի,
- Տրանսպորտային միջոցներ՝ 5 տարի,
- Համակարգչային տեխնիկա՝ 1 տարի,
- Արտադրատնտեսական գույք՝ 5 տարի,
- Այլ հիմնական միջոցներ՝ 3-5 տարի:

Թողարկողի մեքենասարքավորումները ներառում են մասնաբերքի և սուրճի արտադրության համար անհրաժեշտ տարբեր սարքավորումներ, համակարգչային տեխնիկա, մեխանիկական և փայտամշակման հաստոցներ (տեղակայված են ք. Երևան, Աերացիա 1 հասցեում), SFC և AFC արագ սննդի կետերում և Պլենեռ ռեստորանում օգտագործվող սարքավորումներ (գտնվում են ք. Երևան, Տիգրան Մեծի 12, ք. Երևան, Գավիթ Անհաղթի 21, ք. Երևան, Իսահակյան 14 հասցեներում):

Թողարկողի արտադրական ցիկլը (ծառայությունների մատուցումը) ապահովող հիմնական սարքավորումների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում է ստորև բերված աղյուսակում.

N	Սարքավորումների անվանումը	Ընդամենը քանակը	Արտադրման վայրը/երկիրը	Ընդհանուր վիճակը
1.	Սարքավորումներ ունիվերսամի համար „STURM,,	1	Եվրոպա	բարվոք
2.	Մսաղաց	1	Եվրոպա	բարվոք
3.	Խառնիչ	1	Ռուսաստան	բարվոք
4.	Կտրող մեքենա (մասնաբերքի արտադրության սարքավորում)	3	Ռուսաստան, Եվրոպա	բարվոք
5.	Ներարկիչ	2	Եվրոպա	բարվոք
6.	Մառույց արտադրող	1	Եվրոպա	բարվոք
7.	Սառնարանային խցիկ (1.5-20 տ տարողությամբ)	4	Ռուսաստան	բարվոք
8.	Թերմոխցիկ	4	Ռուսաստան	բարվոք
9.	Վակուումային փաթեթավորման սարք	1	Եվրոպա	բարվոք
10.	Փաթեթավորող մեքենա	4	Եվրոպա	բարվոք
11.	Սրճաղացներ	5	Ռուսաստան	բարվոք
12.	Սուրճի բովման մեքենա	1	Թուրքիա	բարվոք
13.	Շշի փչման սարք	1	Եվրոպա	բարվոք
14.	Սննդի պատրաստման սարք (քերիչ)	3	Եվրոպա	բարվոք
15.	Սննդի պատրաստման սարք (burger	4	Եվրոպա	բարվոք

N	Սարքավորումների անվանումը	Ընդամենը քանակը	Արտադրման վայրը/երկիրը	Ընդհանուր վիճակը
	pressor)			
16.	Թոսեր արտադրական	3	Եվրոպա	բարվոր
17.	Հյութի պատրաստման սարք	1	Եվրոպա	բարվոր
18.	Կաթնային կոկտեյլ պատրաստող սարք	2	Եվրոպա	բարվոր
19.	Էլ վառարան	2	Եվրոպա	բարվոր
20.	Գրիլեր	2	Եվրոպա	բարվոր
21.	Բրոսեր (ճարպաջեռոց)	1	Եվրոպա	բարվոր
22.	Պաղպաղակի սարքավորում	1	Եվրոպա	բարվոր
23.	Գազային ֆրիտյուրնիցա	2	Եվրոպա	բարվոր
24.	Էլեկտրական ֆրիտյուրնիցա	2	Եվրոպա	բարվոր
25.	Համակարգիչ	15	կոմպլեկտացված է ՀՀ-ում	բարվոր
26.	Մոնիտոր	16	Կորեա, Չինաստան, Եվրոպա	բարվոր
27.	Տպող սարք	21	Կորեա, Չինաստան, Եվրոպա	բարվոր
28.	Խառատային հաստոց	1	Ռուսաստան	բարվոր
29.	Շաղափային հաստոց	2	Ռուսաստան	բարվոր
30.	Հղկող հաստոց	1	Ռուսաստան	բարվոր
31.	Գայլիկոնող հաստոց	1	Ռուսաստան	բարվոր
32.	Ֆրեզերային հաստոց	1	Ռուսաստան	բարվոր

Թողարկողի արտադրական ցիկլը ապահովող հիմնական սարքավորումներն արդիական են, արտադրված են եվրոպական երկրներում 2001-2006թթ.-ներին, սակայն արտադրություններում ներգրավված են նաև ռուսական արտադրության սարքավորումներ, որոնք տեխնոլոգիական առումով լինելով լավ նախագծված և բարվոր վիճակում պահպանված՝ ընդհանուր առմամբ բավարարում են արդի պահանջներին: Նշված սարքավորումների միջին մաշվածությունը կազմում է մոտ 26.1%:

Հիմնական միջոցների կազմում ներառված են նաև ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցները, այն է՝ սուպերմարկետների համար 2 սարքավորում՝ 87,786 հազ. ՀՀ դրամ ընդհանուր հաշվեկշռային արժեքով: Նշված սարքավորումները ստացվել են «ԱԳ-ԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպությունից՝ 2005թ. հոկտեմբերի 27-ին կնքված թիվ 0510007 և 2004թ. դեկտեմբերի 8-ին կնքված թիվ 0412001 ֆինանսական վարձակալության պայմանագրերով: Վարձակալության պայմանագրերը կնքված են 60 ամիս ժամկետով, որից հետո պայմանագրով նախատեսված կարգով ընկերությունը կարող է գնել վարձատուից նշված գույքը կամ հետ վերադարձնել այն:

Նշված սարքավորումները 2006թ. հուլիսի 31-ին կնքված Սարքավորումների ենթավարձակալության պայմանագրով տրամադրվել են «Սթար Դիվայդ» ՓԲԸ-ին (ամսական 2,613 հազ. դրամ վարձավճարով): Ենթավարձակալության պայմանագիրը գործում է վարձակալության պայմանագրի ժամկետի ընթացքում և դադարում դրա դադարման պահից:

Նշված սարքավորումների գտնվելու վայրերն են՝ ք. Երևան, Ամիրյան 13 և ք. Երևան, Տիգրան Մեծի 37 (ՍԹԱԲ սուպերմարկետներ):

Թողարկողի տրանսպորտային միջոցների կազմում ներառված են 108 միավոր տրանսպորտային միջոց, որից 44 միավորն օգտագործվում է ադմինիստրատիվ նպատակներով, իսկ 64 միավորը նախատեսված է արտադրանքի և ապրանքների տեղափոխման համար: Թողարկողի տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում է ստորև բերված աղյուսակում.

N	Տրանսպորտային միջոցների անվանումը	Ընդհանուր քանակը (հատ)	Ընդհանուր վիճակը
1	BMW-750Li	1	սարքին
2	BMW-525	1	սարքին
3	Mercedes ML 320	1	սարքին
4	Mercedes E 220	1	սարքին
5	Mercedes E 320	3	սարքին
6	Mercedes E 500	1	սարքին
7	Mercedes 208 DKA	1	սարքին
8	Toyota DYNA	1	սարքին
9	WV Vento	1	սարքին
10	Opel VECTRA	1	սարքին
11	Ford TRANSIT	9	սարքին
12	Ford D	3	սարքին
13	ԳԱԶ-31	11	սարքին
14	ՎԱԶ-2104	2	սարքին
15	ՎԱԶ-2106	15	սարքին
16	ՎԱԶ-2107	3	սարքին
17	ՎԱԶ-2121 Նիվա	1	սարքին
18	ԳԱԶԵԼ	10	սարքին
19	Իժ-2717-220	2	սարքին
20	ԶԱԶ-110557	2	սարքին
21	ԳԱԶ-53 Ջրատար մեքենա	1	սարքին
22	ԵրԱԶ-762Վ	1	սարքին
23	ՈւԱԶ-3962	1	սարքին
24	ԶԻԼ	3	սարքին
25	ԿԱՎԶ-3270	2	սարքին
26	Կամազ	2	սարքին
27	Մոպեդ	28	սարքին

Թողարկողին պատկանող գույքի նկատմամբ սեփականության իրավունքը սահմանափակված չէ, բացառությամբ ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների:

Թողարկողը սեփականության իրավունքով իրեն պատկանող շենքեր, շինություններ և հողատարածք չունի և իր գործունեությունն իրականացնում է համապատասխան վարձակալության պայմանագրերով իր ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնված տարածքներում, մասնավորապես՝

- ՀՀ ք.Երևան, Աերացիա 1 հասցեում տեղակայված տարածքում, որը վարձակալվել է 10 տարի ժամկետով՝ քաղաքացի Ժորժիկ Մուրադյանի հետ 2005թ. օգոստոսի 12-ին կնքված վարձակալության պայմանագրով: Վարձավճարի չափը կազմում է ամսական 50 000 ՀՀ դրամ:
- ՀՀ, ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն համայնքի Դ.Անհաղթի փող. 21 հասցեում գտնվող տարածքը, որը վարձակալվել է 4 տարի ժամկետով՝ համաձայն «Սթար Դիվայդ» ՓԲԸ-ի հետ 08.08.2006թ. կնքված վարձակալության պայմանագրի՝ սկսած 2006թ. նոյեմբերի 1-ից: Տարածքի ամսական վարձավճարի չափը կազմում է 400 000 ՀՀ դրամ:
- ՀՀ, ք.Երևան, Կենտրոն համայնք, Իսահակյան փողոց թիվ 14 շենք հասցեում գտնվող տարածքը, որը վարձակալվել է 5 տարի ժամկետով՝ քաղաքացիներ Կարինե Մարգարյանի և Բորիս Մուրադյանի հետ 2005թ. մարտի 12-ին կնքված վարձակալության պայմանագրով: Տարածքի համար սահմանված է ամսական 200 ԱՄՆ դոլարի չափով վարձավճար (վճարները կատարվում են ՀՀ դրամով՝ հաշվարկված համապատասխան օրվա փոխարժեքով):
- ՀՀ, ք.Երևան, Տիգրան Մեծի 12 շենք, թիվ 1 և 1ա հասցեում գտնվող տարածքը, որի վարձակալության պայմանագիրը քաղաքացի Կլարա Դավուդի Խակվեղիսի հետ կնքվել է 2003թ. մայիսի 29-ին՝ մինչև 2004թ. մարտի 19-ը ժամանակով: Նշված պայմանագիրը երկարացվել է և գործում է առ այսօր: Վարձավճարի չափը կազմում է ամսական 10,000 ՀՀ դրամ:

1.15. Թողարկողը բնական ռեսուրսների արդյունահանմամբ կամ վերամշակմամբ չի զբաղվում:

ԳԼՈՒԽ 2. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարմանը մասնակցող անձինք

2.1. Թողարկողի կանոնադրության համաձայն՝

1) Թողարկողի կառավարման մարմիններն են Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովը և Թողարկողի գործադիր մարմինը՝ տնօրենը:

2) Թողարկողի կառավարման բարձրագույն մարմինը Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի Թողարկողի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովներում քվեարկությունների ժամանակ Թողարկողի մասնակիցներն ունեն Թողարկողի կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համապատասխան ձայների քանակ:

3) Թողարկողի մասնակիցների հերթական ընդհանուր ժողովը հրավիրվում է Թողարկողի տնօրենի կողմից տարեկան մեկ անգամ՝ ֆինանսական տարվա ավարտից ոչ շուտ, քան երկու ամիս և ոչ ուշ, քան չորս ամիս անց: Թողարկողը պարտավոր է ամեն տարի գումարել մասնակիցների հերթական ընդհանուր ժողով՝ Թողարկողի գործունեության տարեկան արդյունքները հաստատելու համար:

Թողարկողի մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրվում է Թողարկողի տնօրենի կողմից օրենքով և Թողարկողի կանոնադրությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև բոլոր այն դեպքերում, երբ դա են պահանջում Թողարկողի և նրա մասնակիցների շահերը:

4) Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում.

1. Թողարկողի կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Թողարկողի կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
2. Թողարկողի կողմից բաժնեմասի (բաժնեմասերի) ձեռքբերումը և դրանց իրացումը օրենքով սահմանված դեպքերում,
3. Թողարկողի վերակազմակերպումը,
4. Թողարկողի լուծարումը,
5. Թողարկողի լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռների (լուծարման ամփոփիչ, լուծարման միջանկյալ և լուծարման հաշվեկշիռներ) հաստատումը,
6. Թողարկողի կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,
7. Թողարկողի կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,
8. կազմակերպությունների (այդ թվում՝ դուստր և կախյալ ընկերությունների) հիմնադրումը,
9. կազմակերպություններում (այդ թվում՝ դուստր և կախյալ ընկերություններում) մասնակցության մասին որոշումների ընդունումը,
10. Թողարկողի տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Թողարկողի գործադիր մարմնի լիազորությունները կառավարչին (առևտրային կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) տալու հարցերը,
11. Թողարկողի վերստուգիչ հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
12. Թողարկողի աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
13. աուդիտի իրականացման որոշումն ընդունելը,
14. Թողարկողի տարեկան հաշվետվությունների, տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատումը,
15. Թողարկողի շահույթն ու վնասը ընկերության մասնակիցների միջև բաշխման մասին որոշման ընդունումը,
16. Թողարկողի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը,
17. Թողարկողի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,
18. Թողարկողի կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշում ընդունելը,
19. Թողարկողի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքները (որոնց արժեքը գերազանցում է գուտ ակտիվների մեծության 1/4-ը) կատարելու մասին որոշման ընդունումը,

20. Թողարկողի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,
21. Թողարկողի ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (Թողարկողի ներքին փաստաթղթեր) ընդունումը,
22. ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը:

Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովն իրավունք ունի քննարկել և որոշումներ ընդունել նաև օրենքով և իր կանոնադրությամբ ընդհանուր ժողովի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջ:

5) Թողարկողի կանոնադրության 7.4 կետի բոլոր ենթակետերով (բացի 12, 16 և 21 ենթակետերից) սահմանված հարցերը հանդիսանում են Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցեր և չեն կարող փոխանցվել ընկերության գործադիր մարմնին:

6) Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովն իրավագոր է (քվորում ունի), եթե դրան մասնակցում են Թողարկողի մասնակիցների ձայների ընդհանուր թվի կեսից ավելին տնօրինող մասնակիցները: Թողարկողի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում (երբ քննարկվող հարցը պահանջում է բոլոր մասնակիցների միաձայնությունը) ժողովն իրավասու է բոլոր մասնակիցների (նրանց ներկայացուցիչների) ներկայության դեպքում:

7) Թողարկողի կանոնադրության 7.4 կետի 1, 6, 7 ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցողների ձայների երեք քառորդով, սակայն ոչ պակաս Թողարկողի բոլոր մասնակիցների ձայների երկու երրորդից, 7.4 կետի 10 և 19 ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցողների ձայների երեք քառորդով, 11, 14 և 15 ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցողների ձայների երկու երրորդով, սակայն ոչ պակաս Թողարկողի բոլոր մասնակիցների ձայների կեսից, 3 և 4 ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են Թողարկողի մասնակիցների միաձայն որոշմամբ, իսկ մնացած հարցերի շուրջ՝ Թողարկողի բոլոր մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

8) Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերող հարցերը լուծվում են ժողովի նիստում՝ օրակարգի հարցերի քննարկման, քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով մասնակիցների համատեղ ներկա գտնվելով կամ հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով: Այդ դեպքում որոշման նախագիծն ուղարկվում է մասնակիցներին, որոնք պետք է գրավոր հայտնեն իրենց կարծիքը: Նման քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կամ փոխանցվող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը և դրանց փաստաթղթային հաստատումն ապահովող կապի այլ միջոցներով փոխանակելու միջոցով:

9) Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ:

10) Մեկ մասնակից ունեցող ընկերությունում Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասության հարցերի կապակցությամբ որոշումները կարող են ընդունվել մասնակցի կողմից միանձնյա և ձևակերպվում են գրավոր:

11) Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն (առանց ձայնի իրավունքի) տնօրենը, վերստուգիչ հանձնաժողովի անդամները կամ վերստուգողը, ատոլիտն իրականացնող անձը:

12) Թողարկողի յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի պահանջելու հարցերի քննարկում Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովում՝ պայմանով, որ հարցը ներկայացված լինի նիստը սկսվելուց առնվազն 10 օր առաջ:

13) Թողարկողի ընթացիկ գործունեության ղեկավարությունն իրականացնում է տնօրենը, որն ընտրվում է Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից երեք տարի ժամկետով: Թողարկողի և Թողարկողի տնօրենի միջև պայմանագիրը ստորագրվում է տնօրենին ընտրած ընդհանուր ժողովի նախագահող անձի կամ ընդհանուր ժողովի կողմից լիազորված անձի կողմից (եթե տվյալ ընդհանուր ժողովում նախագահել է տնօրենը):

Տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերից: Տնօրենը հրավիրում է Թողարկողի մասնակիցների հերթական ու արտահերթ ընդհանուր ժողովները, կազմակերպում է Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովների որոշումների կատարումը, հաշվետու է ընդհանուր ժողովին և իրավունք չունի մասնակիցների համար պարտադիր որոշումներ կայացնելու:

Տնօրենն իրավունք ունի առանց լիազորության գործարքներ կատարել Թողարկողի անունից, եթե գործարքի գումարը չի գերազանցում գուտ ակտիվների մեծության 25%-ը:

Թողարկողի տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող ընկերության: Նա պարտավոր է Թողարկողի կամ Թողարկողի մասնակիցների պահանջով հատուցել իր կողմից Թողարկողին պատճառած վնասները: Թողարկողին պատճառած վնասների հատուցման հայցով դատարան դիմելու իրավունք ունի Թողարկողը կամ նրա մասնակիցը:

14) Թողարկողի տնօրենն իր իրավասության սահմաններում՝

- առանց լիազորագրի գործում է Թողարկողի անունից,
- տնօրինում է Թողարկողի գույքը, այդ թվում՝ ֆինանսական ռեսուրսները,
- կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
- տալիս է լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
- բանկային հիմնարկներում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ,
- հաստատում է հաստիքներ,
- իրականացնում է Օրենքով, Թողարկողի կանոնադրությամբ իրեն վերապահված կամ Թողարկողի ընդհանուր ժողովի կողմից տրված այլ լիազորություններ և հանձնարարություններ:

15) Թողարկողն իրավասու է իր գործադիր մարմնի իրավասությունները փոխանցել կառավարչին (առևտրային կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր):

Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 26.12.2006թ. որոշում է ընդունվել վերստուգիչ հանձնաժողով չընտրելու վերաբերյալ՝ հիմք ընդունելով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 35 հոդված 6 կետի և 49 հոդվածի 5 կետի դրույթները, ինչպես նաև Թողարկողի կանոնադրության 7.16 կետով սահմանված դրույթը¹:

2.2. Թողարկողի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են հաջորդ էջում բերված աղյուսակում.

¹ Ըստ այդ դրույթի՝ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը, եթե Ընկերության մասնակիցների թիվը չի գերազանցում 20-ը, կարող է որոշում ընդունել վերստուգիչ հանձնաժողով չստեղծելու, վերստուգող չընտրելու մասին:

Անուն, Ազգանուն Մասնակցությունը կառավարման մարմիններում	Ծննդ. տարեթիվը և քաղաքաց.	Մասնագիտությունը և որակավորումը, բնակության վայրը, անձնագրի սերիան և համարը	Վերջին 3 տարիների ընթացքում զբաղ.պաշտ, այդ թվում համատեղությամբ, ժամանակագրական կարգով՝ նշելով կազմ. անվանումները, որտեղ այդ անձը պաշտոն է զբաղեցրել	Վերջին 3 տարիների ընթացքում Թողարկողի մոտ վարձ. չափը (տարին, գումարը՝ դրամով)	Տվյալ անձին պատկանող Թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը	Մասնակցությունը այլ բաժնային արժեթղթերում	Պայմանագրերը, որոնց համաձայն տվյալ անձը հանդիսանում է Թողարկողի կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետները
Շահեն Ստեփանյան Տնօրեն	07.08.62թ. ՀՀ	Ինժեներ, ՀՀ, Արարատի մարզ, գյուղ Նոյակերտ AA0690327	1996թ.-ից մինչև 2006թ. նոյեմբեր հանդիսացել է Թողարկողի փոխտնօրեն 2006թ. նոյեմբերից առ այսօր հանդիսանում է Թողարկողի տնօրենը Համատեղությամբ չի աշխատում	2004թ. 1,200,000 ՀՀ դրամ 2005թ. 1,200,000 ՀՀ դրամ 2006թ. 1,800,000 ՀՀ դրամ	-	-	«ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ-ի մասնակիցների 20.10.2006թ. արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 15 արձանագրություն: Աշխատանքային պայմանագիր N90, 15.11.2006թ. Պայմանագիրը կնքված է երեք տարի ժամկետով:
Արա Ստեփանյան ԼՂՀ մասնաճյուղի տնօրեն	08.04.76թ. ՀՀ	ինժեներ-շինարար ՀՀ, ք. Երևան, Ադոնցի 17/2-47 AE0524317	2004թ. ապրիլ - առ այսօր հանդիսանում է «ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ ԼՂՀ մասնաճյուղի տնօրեն Համատեղությամբ չի աշխատում	2004թ.` 720,000 ՀՀ դրամ, 2005թ.` 960,000 ՀՀ դրամ 2006թ.` 960,000 ՀՀ դրամ	-	-	«ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ տնօրենի 12.04.2004թ. N1 հրաման: Գործող աշխատանքային պայմանագիրը կնքված է 01.09.2005թ.` անորոշ ժամկետով:
Աննա Գևորգյան Ֆինանսական տնօրեն	16.07.73թ. ՀՀ	Տնտեսագետ ՀՀ, ք. Երևան, Անտառային 49 AF0605904	2004-2005թթ. աշխատել է KPMG, Մոսկվա ընկերությունում՝ որպես աուդիտոր 2005– 2006թթ. աշխատել է “Deloitte & Touche”, Մոսկվա, ընկերությունում՝ որպես ավագ փորձագետ 2007թ. մարտ - առ այսօր հանդիսանում է Թողարկողի ֆինանսական տնօրենը	-	-	-	«ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ տնօրենի 31.03.2007թ. N82 հրաման: Աշխատանքային պայմանագիր, 31.03.2007թ. Պայմանագիրը կնքված է անորոշ ժամկետով:
Կարեն Մամսոնյան Գլխավոր հաշվապահ	24.02.62թ. ՀՀ	Տնտեսագետ ՀՀ, ք.Երևան, Եր.Քոչարի փ., շենք 1, բն.36 AE0400304	2002-2004թթ. հանդիսացել է «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՀԶ գլխավոր հաշվապահը 2004թ. հուլիս -առ այսօր հանդիսանում է Թողարկողի գլխավոր հաշվապահը	2004թ. հուլիս - դեկտ.՝ 560,000 ՀՀ դրամ, 2005թ.` 960,000 ՀՀ դրամ, 2006թ.` 960,000 ՀՀ դրամ	-	-	«ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ տնօրենի 01.07.2004թ. N82 հրաման: Գործող աշխատանքային պայմանագիր՝ N16, կնքված 01.09.2005թ.: Պայմանագիրը կնքված է անորոշ ժամկետով:

2.3. 2004-2006թթ. ընթացքում կառավարմանը մասնակցող անձի դեմ (կամ այն կազմակերպության դեմ, որտեղ այդ անձը նշված ժամանակաշրջանում կառավարմանը մասնակցող անձ է կամ եղել է) կամ իր կողմից սնանկացման (անվճարունակության) միջնորդությունների ներկայացման, դատարանի որոշման (դատավճռի) հիման վրա կամ պետական որևէ մարմնի կողմից նրա (կամ այն կազմակերպության դեմ, որտեղ այդ անձը նշված ժամանակաշրջանում կառավարմանը մասնակցող անձ է կամ եղել է) նկատմամբ պատասխանատվության միջոցներ չեն կիրառվել՝ բացառությամբ 7.2. կետով ներկայացված պատասխանատվության միջոցների:

2.4. Թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց միջև ազգակցական կապեր առկա չեն:

2.5. Թողարկողը չունի կառավարման մարմինների կազմում չընդգրկված այնպիսի աշխատակիցներ, որոնք կարող են Թողարկողի ներկա կամ ապագա գործունեության վրա էական ազդեցություն ունենալ:

ԳԼՈՒԽ 3. Թողարկողի բաժնային արժեթղթերի նշանակալից, բայց ոչ խոշոր սեփականատերերի մասին տեղեկություններ

3.1. Թողարկողը չունի բաժնային արժեթղթերի նշանակալից, բայց ոչ խոշոր սեփականատեր հանդիսացող ֆիզիկական անձ:

3.2. Թողարկողը չունի բաժնային արժեթղթերի նշանակալից, բայց ոչ խոշոր սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձ:

ԳԼՈՒԽ 4. Թողարկողի հետ փոխկապակցված անձանց մասին տեղեկություններ

4.1. Թողարկողի հետ փոխկապակցված իրավաբանական անձ է հանդիսանում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության իրավաբանական անձ «Սլինդոր Վենչըրս Լիմիթեդ» Միջազգային Բիզնես Ընկերությունը, որին պատկանում է Թողարկողի բաժնեմասի 92.454%-ը (479,280,000 ՀՀ դրամ): Ընկերությունը հիմնադրվել է Բրիտանական Վիրջինյան կղզիներում 28.12.2004թ., իրավաբանական անձի կարգավիճակ է ստացել 29.12.2004թ. Բրիտանական Վիրջինյան կղզիներում, գրանցման վկայական՝ 632126, հասցե՝ Բրիտանական Վիրջինյան կղզիներ, Տորտոլա, Դրեյք Չամբերս գրասենյակ:

4.2. Թողարկողի հետ փոխկապակցված ֆիզիկական անձ է հանդիսանում ՀՀ քաղաքացի Հենրիկ Վահանի Չախարյանցը, հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Բյուրեղավան, 162., բն.9, անձնագիր՝ AH0278802, տրված 03.11.2006թ. 059-ի կողմից: Հ.Չախարյանցին ուղղակիորեն պատկանում է Թողարկողի բաժնեմասի 7.546%-ը (39,120,000 ՀՀ դրամ): Հ.Չախարյանցը Թողարկողի տնօրենն է հանդիսացել՝ մինչև 2006թ. Շահեն Ստեփանյանի նշանակումը:

Նա հանդիսանում է Թողարկողի հետ փոխկապակցված անձ, քանի որ փաստացի հնարավորություն ունի ազդելու Թողարկողի կողմից կայացվող որոշումների վրա:

Թողարկողի հետ փոխկապակցված են նաև հետևյալ իրավաբանական անձինք.

1. «ՆԱՏՖՈՒԴ» ՓԲԸ, գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան փող., 502., բն. 57, գրանցված 02.11.2006թ., գրանցման համար՝ 286.120.06242, գրանցման վկայականի համար՝ 03Ա 073701:
2. «ՍԹԱՐ ԳԼՈՈՒԽ» ՓԲԸ, գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան փող., 502., բն. 57, գրանցված 22.09.2006թ., գրանցման համար՝ 286.120.06205, գրանցման վկայականի համար՝ 03Ա 073166:
3. «ՍԹԱՐ ԳԻՎԱՅԳ» ՓԲԸ, գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան փող., թիվ 25/14, բն. 51, պետական գրանցման վկայական՝ 03Ա 070955: Ընկերության տնօրենն է Վահան Քերոբյանը, որը 2004-2006թթ. Թողարկողի մոտ զբաղեցրել է «ՍԹԱՐ» ծրագրի ղեկավարի պաշտոնը:

Վերոնշյալ երեք ընկերությունները հանդիսանում են Թողարկողի հետ փոխկապակցված անձինք, քանի որ Թողարկողը և այդ ընկերությունները փաստացի ղեկավարվում են մեկ ֆիզիկական անձի՝ Հենրիկ Չախարյանցի կողմից (գտնվում են ընդհանուր հսկողության տակ): Հ.Չախարյանցը հանդիսանում է «ՆԱՏՖՈՒԴ» և «ՍԹԱՐ ԳԼՈՈՒԽ» փակ բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի 100%-ի սեփականատերը և զբաղեցնում է գործադիր տնօրենի պաշտոնը, ինչպես նաև «Սթար Դեյվայթ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 71.7%-ի սեփականատերը: Այս առումով Թողարկողը և նշված երեք ընկերություններն իրենց գործունեությունը ծավալում են՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

ԳԼՈՒԽ 5. Տեղեկություններ թողարկված արժեթղթերի վերաբերյալ

5.1. Հիմնադրման պահից մինչ օրս Թողարկողի կողմից թողարկվել են միայն ոչ փաստաթղթային բաժնեմասեր: Հիմնադրման պահի դրությամբ Թողարկողի կանոնադրական կապիտալը կազմել է 18.860.000 ՀՀ դրամ: Այնուհետև սույն ազդագրի 8-րդ գլխի 8.2. կետում նշված միացումների և առանձնացման արդյունքում այն մի քանի անգամ ենթարկվել է փոփոխությունների, ընդ որում՝ փոխվել է ինչպես կանոնադրական կապիտալի ընդհանուր մեծությունը, այնպես էլ բաժնեմասերի անվանական արժեքները: Սույն ազդագրի ներկայացման պահի դրությամբ Թողարկողի կանոնադրական կապիտալը կազմում է 518.400.000 ՀՀ դրամ, որը բաղկացած է 479.280.000 ՀՀ դրամ և 39.120.000 ՀՀ դրամ անվանական արժեքներով երկու բաժնեմասից (Թողարկողի գործունեության ընթացքում նրա կանոնադրական կապիտալի և բաժնեմասերի փոփոխությունների մանրամասնությունները ներկայացված են ստորև):

Արժեթղթերի գրանցում իրականացնող որևէ մարմնի կողմից Թողարկողի բաժնեմասերը չեն գրանցվել, հետևաբար դրանց չեն շնորհվել գրանցման համարներ և տարբերակիչ ծածկագիր: Թողարկողի բաժնեմասերը թողարկված են անժամկետ:

Հաշվի առնելով Թողարկողի կազմակերպական-իրավական ձևը՝ նրա կողմից թողարկված բաժնեմասերը հրապարակայնորեն վաճառվող արժեթղթեր չեն, ուստի ստորև ներկայացվում են Թողարկողի կանոնադրական կապիտալի փոփոխությունները՝ ըստ ամսաթվերի:

Հիմնադրման և փոփոխությունների ամսաթիվը	Կանոնադրական կապիտալը, ՀՀ դրամ
11.12.2003թ.	18 860 000
29.12.2003թ.	60 000 000
30.05.2005թ.	60 345 000
14.09.2005թ.	603 840 000
16.03.2006թ.	518 400 000

Թողարկողի մասնակիցները (բաժնեմասի սեփականատերերը) իրավունք ունեն՝

- Օրենքով կամ Թողարկողի կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել Թողարկողի կառավարմանը՝ ներկա գտնվել ընդհանուր ժողովին, հանդես գալ առաջարկություններով, մասնակցել օրակարգային հարցերի քննարկմանը և քվեարկել որոշումներ ընդունելիս,
- ստանալ Թողարկողի գործունեությունից ստացվող շահույթի մասը,
- Թողարկողի լուծարման դեպքում ստանալ շահույթի մի մասը, պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած գույքի մասը կամ դրա արժեքը,
- Թողարկողի կանոնադրությամբ սահմանված կարգով տեղեկություններ ստանալ Թողարկողի գործունեության մասին՝ գաղտնի փաստաթղթերից բացի, ծանոթանալ հաշվապահական հաշվառման, հաշվետվության, Թողարկողի արտադրատնտեսական գործունեության այլ փաստաթղթերի հետ,
- ցանկացած պահի դուրս գալ Թողարկողից (անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից),
- հայցով դիմել դատարան՝ Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
- Թողարկողի գույքի հաշվին Թողարկողի կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ բաժնեմասեր,
- օգտվել Օրենքով և Թողարկողի կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

Թողարկողի մասնակիցները (բաժնեմասի սեփականատերերը) պարտավոր են՝

- Թողարկողի կանոնադրությամբ սահմանված կարգի համաձայն՝ կատարել ներդրումներ Թողարկողի կանոնադրական կապիտալում,

- չիրապարակել Թողարկողի գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ,
- կատարել Թողարկողի նկատմամբ ստանձնած պարտականությունները,
- պահպանել Թողարկողի կանոնադրության դրույթները:

2004 և 2006թթ. Թողարկողը աշխատել է շահույթով, սակայն 2004 և 2006թթ. գործունեությունը ամփոփող համապատասխանաբար 2005թ.-ին և 2007թ.-ին կայացած տարեկան ժողովների որոշումների համաձայն՝ շահաբաժիններ չեն վճարվել, այլ որոշվել է զուտ շահույթն ուղղել Թողարկողի գործունեության տարբեր ուղղությունների զարգացմանը:

2005թ. ֆինանսական տարին ամփոփող 21.03.2006թ.-ին կայացած Թողարկողի մասնակիցների տարեկան ընդհանուր ժողովում որոշվել է Թողարկողի 299,683.0 հազ. դրամ զուտ շահույթից 215,107.0 հազ. դրամը շահաբաժնի ձևով բաշխել Թողարկողի մասնակիցների միջև՝ նրանց ունեցած բաժնեմասերին համամասնորեն: Ըստ այդմ, 1 բաժնեմասի հաշվարկով շահաբաժնի չափերը կազմել են 198,875.0 հազ. դրամ և 16,232.0 հազ. դրամ:

Բացակայում է որևէ դեպք, երբ արժեթղթերի դիմաց վճարումը սահմանափակվել է: Վերջին երեք տարիներին միջանկյալ շահաբաժիններ չեն վճարվել:

Վերջին երկու ֆինանսական տարիների ընթացքում ֆոնդային բորսայում Թողարկողի բաժնեմասերի վաճառք չի եղել:

Ավարտված վերջին ֆինանսական տարվա և ընթացիկ տարվա վերջին եռամսյակի դրությամբ Թողարկողի բաժնեմասերով արտաբորսայական գործարքներ չեն կատարվել:

5.2. 2003 թվականի դեկտեմբերի 29-ին Թողարկողի և «Միջնավան» ՍՊԸ-ի մասնակիցների համատեղ ժողովում որոշում է ընդունվել «Միջնավան» ՍՊԸ-ի՝ Թողարկողին միացման վերաբերյալ: Նշված որոշման արդյունքում Թողարկողի կանոնադրական կապիտալը կազմել է 60,000,000 ՀՀ դրամ, իսկ Թողարկողի բաժնեմասերը փոխարկվել են 2 բաժնեմասի՝ 42,780,000 և 17,220,000 անվանական արժեքով: Նշված փոփոխությունները գրանցվել են ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 30.12.2003թ.-ին:

2004 թվականի հունվարի 20-ին Թողարկողի մասնակիցների արտահերթ ժողովում որոշում է ընդունվել Թողարկողի բաժնեմասերի փոխարկման (անվանական արժեքի փոփոխության) վերաբերյալ՝ առանց փոփոխելու կանոնադրական կապիտալի ընդհանուր չափը, մասնավորապես՝ Թողարկողի 2 բաժնեմասերը փոխարկվել են 2 նոր բաժնեմասերի՝ 38,580,000 և 21,420,000 անվանական արժեքով: Նշված փոփոխությունները գրանցվել են ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 21.01.2004թ.-ին:

2005 թվականի մայիսի 23-ին Թողարկողի և «Սաթինե Պողոսյան» ՍՊԸ-ի մասնակիցների համատեղ ժողովում որոշում է ընդունվել «Սաթինե Պողոսյան» ՍՊԸ-ի՝ Թողարկողին միացման վերաբերյալ: Նշված որոշման արդյունքում Թողարկողի կանոնադրական կապիտալը կազմել է 60,345,000 ՀՀ դրամ, իսկ Թողարկողի 2 բաժնեմասերից միայն մեկն է փոխարկվել (նախկինում 38,580,000 ՀՀ դրամ) նոր բաժնեմասով՝ 38,925,000 անվանական արժեքով (նման փոխարկումը կատարվել է համաձայն միացման պայմանագրի և այն հանգամանքի, որ «Սաթինե Պողոսյան» ՍՊԸ-ի միակ մասնակից հանդիսացել է Թողարկողի մասնակիցներից մեկը): Նշված փոփոխությունները գրանցվել են ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 30.05.2005թ.-ին:

2005 թվականի օգոստոսի 15-ին Թողարկողի մասնակիցների արտահերթ ժողովում որոշում է ընդունվել Թողարկողի կանոնադրական կապիտալի ավելացման մասին, որի արդյունքում այն կազմել է 603,840,000 ՀՀ դրամ: Կանոնադրական կապիտալի ավելացումն իրականացվել է մասնակիցներից մեկի կողմից լրացուցիչ ներդրում կատարելու և Թողարկողի զուտ ակտիվների հաշվին: Նշված փոփոխության արդյունքում Թողարկողի 2 բաժնեմասեր փոխարկվել են 2 նոր բաժնեմասերի՝ 124,560,000 ՀՀ դրամ և 479,280, 000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Նշված փոփոխությունները գրանցվել են ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

կենտրոնական մարմնի կողմից 15.08.2005թ.-ին: Գրանցման պահին բոլոր բաժնեմասերը վճարված են եղել:

2006 թվականի մարտի 3-ին Թողարկողի մասնակիցների արտահերթ ժողովում որոշում է ընդունվել Թողարկողի վերակազմակերպման մասին, որի արդյունքում Թողարկողից առանձնացել է «ՄԱԳՆԵՏԻԿ» ՍՊԸ-ն: Համաձայն հաստատված առանձնացման կարգի և բաժանիչ հաշվեկշռի՝ Թողարկողի մեկ մասնակցի բաժնեմասի մի մասը (85,440,000 ՀՀ դրամի չափով) փոխարկվել է որպես «ՄԱԳՆԵՏԻԿ» ՍՊԸ-ի նույն անվանական արժեքով բաժնեմասի, որը կազմում է նշված ընկերության բաժնեմասի 100%-ը: Վերակազմակերպման արդյունքում Թողարկողի կանոնադրական կապիտալը նվազել է և կազմել է 518,400,000 ՀՀ դրամ: Կանոնադրական կապիտալի փոփոխության արդյունքում Թողարկողի 2 բաժնեմասերից միայն մեկն է փոխարկվել նոր բաժնեմասով՝ 39,120,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Նշված փոփոխությունները գրանցվել են ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 16.03.2005թ.-ին:

ԳԼՈՒԽ 6. Թողարկողի ֆինանսական վիճակի մասին տեղեկությունները

6.1. Թողարկողի տարեկան և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են կից հավելվածում:

6.2. Թողարկողի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների մասին թողարկողի կառավարմանը մասնակցող առնվազն երկու անձի վերլուծությունները.

ա) Ստորև ներկայացվում է Թողարկողի ոչ ընթացիկ ակտիվների կառուցվածքը (ֆինանսական ցուցանիշները ներկայացված են հազար դրամներով):

	<u>31.12.06թ.</u>	<u>31.12.05թ.</u>	<u>31.12.04թ.</u>
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	149,857	173,877	74,975
Ոչ նյութական ակտիվներ	2,596	2,834	2,151
Կանխավճար ոչ ընթացիկ ակտիվների գծով	4,262	577,526	552,365
Կանխավճարներ նվազագույն շահութահարկի գծով	23,601	-	-
Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ	87,786	56,116	-
	<u>268,102</u>	<u>810,353</u>	<u>629,491</u>

Թողարկողի ընդհանուր ակտիվները 2006 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 3,175.25 մլն ՀՀ դրամ: Թողարկողի ոչ ընթացիկ ակտիվները 31.12.2006թ., 31.12.2005թ. և 31.12.2004թ. դրությամբ կազմում են ընդհանուր ակտիվների համապատասխանաբար շուրջ 8.4%, 27.5% և 30%-ը: 31.12.2006թ. դրությամբ ոչ ընթացիկ ակտիվների տեսակարար կշռի նվազումը պայմանավորված է Թողարկողի ակտիվների շարունակական աճով և 31.12.2006թ. դրությամբ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերման համար տրված կանխավճարների կտրուկ նվազմամբ: 31.12.2005թ. և 31.12.2004թ. դրությամբ Թողարկողն ունեցել է անշարժ գույք ձեռք բերելու համար տրված կանխավճարներ՝ համապատասխանաբար 577 526 և 552 365 հազ. դրամ ծավալով:

31.12.2006թ. դրությամբ հիմնական միջոցների արժեքը կազմում է 149.9 մլն դրամ կամ ընդհանուր ակտիվների շուրջ 4.7%-ը: Ստորև ներկայացվում են հիմնական միջոցների կառուցվածքը և դրանց նշանակալի փոփոխությունների մեկնաբանությունները.

Չուտ հաշվեկշռային արժեք, հազար դրամներով					
N	Հիմնական միջոցներ	31.12.2006թ. դրությամբ	31.12.2005թ. դրությամբ	Փոփ. (%)	Մեկնաբանություններ
1.	Շենքեր	-	50,621		Շենքերի նվազումը տեղի է ունեցել «Մագնետիկ» ՍՊԸ-ի առանձնացման հետևանքով:
2.	Մեքենաներ, Սարքավորումներ, Համակարգիչներ	63,585	34,710	83.2%	Մեքենաները, սարքավորումներն ու համակարգիչները զգալիորեն ավելացել են Թողարկողի գործունեության ընդլայնման հետևանքով, մասնավորապես՝ նոր սարքավորումներ Բիելլա մսամթերքի արտադրության, SFC արագ սննդի նոր հաստատությունների համար, նոր համակարգիչներ՝ 2006թ.-ին ընդունված աշխատողների համար և այլն:
3.	Տրանսպորտային միջոցներ	74,829	72,266	3.5%	Փոփոխությունն էական չէ:
4.	Արտադրատնտեսակ	4,153	5,869	(29.2%)	Նվազումը տեղի է ունեցել

N	Հիմնական միջոցներ	31.12.2006թ. դրությամբ	31.12.2005թ. դրությամբ	Փոփ. (%)	Սեկնաբանություններ
	ան գույք				կուտակված մաշվածության հետևանքով:
5.	Այլ հիմնական միջոցներ	7,290	10,411	(30%)	Այլ հիմնական միջոցները նվազել են Սթար սուպերմարկետների գործունեության ընդհատման հետևանքով:
Ընդամենը		149,857	173,877	(13.8%)	

Հիմնական միջոցների կազմում ներառված չեն ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցները: Ֆինանսական վաճակալությամբ ստացված միջոցների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները ներկայացված են ստորև:

Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ	Սկզբնական արժեք	հազար դրամներով	
		Կուտակված ամորտիզացիա	Հաշվեկշռային արժեք
Առ 31 դեկտեմբերի 2004թ.	-	-	-
Ավելացում ձեռքբերումից	67,336	-	-
Հաշվարկված ամորտիզացիա 2005թ. համար		11,220	-
Առ 31 դեկտեմբերի 2005թ.	67,336	11,220	56,116
Ավելացում ձեռքբերումից	55,262	-	-
Հաշվարկված ամորտիզացիա 2006թ. համար		23,592	-
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	122,598	34,812	87,786

Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներն իրենցից ներկայացնում են սուպերմարկետների համար 2 սարքավորումներ, որոնք ստացվել են «ԱԳԲԱ ԼԻՉԻՆԳ» վարկային կազմակերպությունից՝ 08.12.2004թ. և 27.10.2005թ. կնքված ֆինանսական վարձակալության պայմանագրերով: Վարձակալության ժամկետը 60 ամիս է: Ներկայումս նշված սարքավորումները ենթավարձակալությամբ տրամադրվել են «Սթար Դիվայդ» ՓԲԸ-ին: Բոլոր վարձավճարները ֆիքսված են, և տոկոսադրույքները կազմում են տարեկան 21-22 տոկոս: Դրանց իրական արժեքը գնահատվում է հավասար հաշվեկշռային արժեքին: Որպես սպահովության միջոց օգտագործվել են վարձակալված ակտիվները:

Հիմնական միջոցների հաշվեկշռային և շուկայական արժեքների միջև տարբերություններն էական չեն: Թողարկողի ընդհանուր ակտիվների գերակշիռ մասը կազմում են ընթացիկ ակտիվները: Ստորև ներկայացվում է ընթացիկ ակտիվների կառուցվածքը:

Ընթացիկ ակտիվներ	31.12.2006թ.	31.12.2005թ.	31.12.2004թ.
Նյութեր	223,188	176,432	153,802
Արագամաշ առարկաներ	513	170	8,044
Ապրանքներ	394,143	871,222	549,487
Տրված ընթացիկ կանխավճարներ	14,865	40,576	22,508
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	591,428	240,501	571,926
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	154,565	139,530	151,918
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	4,233	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	381,244	56,375	4,970
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	1,142,968	608,120	2,402
<i>Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով</i>	<i>1,119,415</i>	<i>574,141</i>	<i>-</i>
<i>Այլ ընթացիկ ակտիվներ</i>	<i>23,553</i>	<i>33,979</i>	<i>2,402</i>
	2,907,147	2,132,926	1,465,057

Թողարկողի ընթացիկ ակտիվները 31.12.2004թ., 31.12.2005թ. և 31.12.2006թ. դրությամբ կազմում են ընդհանուր ակտիվների համապատասխանաբար շուրջ 70%, 72.5% և 91.5%-ը: Ընթացիկ ակտիվների տեսակարար կշռի շարունակական աճը պայմանավորված է ինչպես տարեցտարի դրանց էական աճով, այնպես էլ ոչ ընթացիկ ակտիվների տեսակարար կշռի նվազմամբ (պատճառները ներկայացված են սույն բաժնի ոչ ընթացիկ ակտիվների մասում):

31.12.2006թ. դրությամբ Թողարկողի ընթացիկ ակտիվներում պաշարները կազմել են շուրջ 21%՝ 31.12.2005թ.-ի շուրջ 49%-ի համեմատությամբ: Նման փոփոխությունը պայմանավորված է ինչպես ընթացիկ ակտիվների աճի, այնպես էլ պաշարների ծավալների նվազման հանգամանքով: Մասնավորապես՝ 31.12.2006թ. դրությամբ նախորդ տարվա համեմատ էապես նվազել են ապրանքների ծավալները՝ շուրջ 55%-ով:

Ընթացիկ ակտիվների կազմում մեծ տեսակարար կշիռ են կազմում դեբիտորական պարտքերը: Մասնավորապես՝ 31.12.2006թ., 31.12.2005թ. և 31.12.2004թ. դրությամբ դեբիտորական պարտքերը կազմել են ընթացիկ ակտիվների համապատասխանաբար 64.2%, 44.7% և 49.4%-ը: Թողարկողի ընթացիկ ակտիվների աճը հիմնականում պայմանավորված է դեբիտորական պարտքի ծավալների աճով, մասնավորապես՝ 2004-2006թթ. ժամկահատվածում դեբիտորական պարտքն աճել է շուրջ 152%-ով, իսկ 31.12.2005թ. համեմատությամբ 31.12.2006թ. դրությամբ դեբիտորական պարտքն աճել է գրեթե կրկնակի:

Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի գերակշիռ մասն առաջացել է հիմնական միջոցների վաճառքից: Ստորև ներկայացվում է վաճառքների գծով դեբիտորական պարտքերի կառուցվածքը.

Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	31.12.06թ.	%	31.12.05թ.	%	31.12.04թ.	%
Առևտրական դեբիտորական պարտքեր	78,096	13.2	33,487	13.9	38,917	6.8
Դեբիտորական պարտքեր հիմնական միջոցների վաճառքների գծով	513,332	86.8	207,014	86.1	533,009	93.2
	591,428	100	240,501	100	571,926	100

31.12.2006թ. դրությամբ հիմնական միջոցների վաճառքի գծով դեբիտորական պարտքի մի մասը՝ 3,750 հազ. դրամի չափով, Թողարկողի հետ փոխկապակցված անձ հանդիսացող «Սթար Դիվայթ» ՓԲԸ-ին հիմնական միջոցի վաճառքից առաջացած դեբիտորական պարտքի մնացորդն է: Վաճառքը կատարված է շուկայական գնով:

Թողարկողի այլ ընթացիկ ակտիվների կազմում ներառված են առհաշիվ տրված գումարների գծով դեբիտորական պարտքերը, որոնք 31.12.2006թ. և 31.12.2005թ. դրությամբ կազմել են համապատասխանաբար 1 119 415 հազ. ՀՀ դրամ և 574 141 հազ. ՀՀ դրամ:

Համաձայն Թողարկողի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ առևտրական և այլ դեբիտորական պարտքերը չափվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները (անհավաքելության պահուստը): Պահուստի մեծությունը որոշվում է որպես ակտիվի ընթացիկ հաշվեկշռային արժեքի և դրա գծով ակնկալվող ապագա դրամական ներհոսքերի ներկա արժեքի տարբերություն: Անհավաքագրելի դեբիտորական պարտքը դուրս է գրվում պահուստի հաշվին: Պահուստի ստեղծումը, դրա փոփոխությունները, ինչպես նաև նախկինում դուրս գրված գումարների հետագա վճարումները ճանաչվում են որպես ծախս կամ եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ իրացման ծախսերի կազմում:

բ) Վերջին երեք տարիների համար ընթացիկ ակտիվները ցուցաբերել են կայուն աճի միտում, միջոցն ունյն ժամանակահատվածի համար ընթացիկ պարտավորությունները ցուցաբերել են փոփոխական վարքագիծ: Վերջին երեք տարիների ընթացքում Թողարկողի գործունեության զգալի աճի պարագայում 31.12.2004թ. համեմեմատությամբ 31.12.2006թ. ընթացիկ պարտավորությունները նվազել են շուրջ 27%-ով: Ստորև ներկայացվում են ընթացիկ ակտիվները, ընթացիկ պարտավորությունները և դրանց հարաբերակցությունը վերջին երեք տարիների համար:

	<u>31.12.2006</u>	<u>31.12.2005</u>	<u>31.12.2004</u>
Ընթացիկ ակտիվներ	2,907,147	2,132,926	1,465,057
Ընթացիկ պարտավորություններ	1,027,198	745,888	1,410,855
Ընթացիկ ակտիվներ/ Ընթացիկ պարտավորություններ	<u>2.83</u>	<u>2.86</u>	<u>1.04</u>

Ընթացիկ ակտիվների, այդ թվում՝ դրա առանձին տարրերի միտումների վերաբերյալ վերլուծությունը ներկայացված է նախորդ բաժնում:

Ընթացիկ պարտավորությունների վերաբերյալ վերլուծությունը ներկայացված է հաջորդ բաժնում: Ընթացիկ ակտիվների համալրման աղբյուր ծառայում են ինչպես Թողարկողի սեփական կապիտալը, այնպես էլ կարճաժամկետ փոխառու միջոցները: Հատկանշական է, որ վերջին երեք տարիների համար ընթացիկ ակտիվների աճն ուղեկցվել է գնումների գծով կրեդիտորական պարտքի նվազմամբ (31.12.2004թ. համեմատությամբ 31.12.2006թ.-ին կրեդիտորական պարտքերը նվազել են շուրջ 45%-ով):

զ) Թողարկողի պարտավորություններն իրենցից ներկայացնում են ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորությունների ամբողջությունը: 31.12.2006թ., 31.12.2005թ. և 31.12.2004թ. դրությամբ Թողարկողի ընդհանուր պարտավորությունները կազմել են ակտիվների համապատասխանաբար 67.4%, 64.8% և 88.8%-ը: 31.12.2004թ. համեմատությամբ 31.12.2005թ.-ին պարտավորությունների տեսակարար կշռի նվազումը հիմնականում պայմանավորված է Թողարկողի կանոնադրական կապիտալի ավելացմամբ:

Ոչ ընթացիկ պարտավորություններ

Թողարկողի ոչ ընթացիկ պարտավորությունները 31.12.2006թ., 31.12.2005թ. և 31.12.2004թ. դրությամբ կազմել են ընդհանուր պարտավորությունների համապատասխանաբար 52%, 60.9% և 24.2%-ը: Ստորև ներկայացված է Թողարկողի ոչ ընթացիկ պարտավորությունների կառուցվածքը:

	<u>31.12.2006</u>	<u>31.12.2005</u>	<u>31.12.2004</u>
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ	1,112,460	1,161,670	449,686
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	<u>1,112,460</u>	<u>1,161,670</u>	<u>449,686</u>

Ընթացիկ պարտավորություններ

Թողարկողի ընթացիկ պարտավորությունները 31.12.2006թ., 31.12.2005թ. և 31.12.2004թ. դրությամբ կազմել են ընդհանուր պարտավորությունների համապատասխանաբար 48%, 39.1% և 75.8%-ը: Ստորև ներկայացված է Թողարկողի ընթացիկ պարտավորությունների կառուցվածքը:

	<u>31.12.2006</u>	<u>%</u>	<u>31.12.2005</u>	<u>%</u>	<u>31.12.2004</u>	<u>%</u>
Կարճաժամկետ վարկեր	400,348	39.0	370,351	49.7	251,274	17.8
Կարճաժամկետ փոխառություններ	-	-	98,200	13.2	143,762	10.2
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	529,424	51.5	248,319	33.3	969,072	68.7
Ստացված ընթացիկ կանխավճարներ	77,053	7.5	9,565	1.3	7,787	0.6
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	4,013	0.4	7,520	1.0	2,812	0.2
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր սոց. վճարների գծով	3,398	0.3	81	0.0	372	0.0
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	12,962	1.3	11,852	1.6	1,132	0.1
Այլ կրեդիտորական պարտքեր	-	-	-	-	34,644	2.5
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	<u>1,027,198</u>	<u>100</u>	<u>745,888</u>	<u>100</u>	<u>1,410,855</u>	<u>100</u>

Թողարկողի բանկային վարկերն ու փոխառություններն արտահայտված են արտարժույթով: 2006 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Թողարկողի փոխառությունները տրամադրված են «Էչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի, Առևտրի և զարգացման Սևծովյան բանկի և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից:

Ընթացիկ պարտավորությունների կազմում զգալի տեսակարար կշիռ ունեն մաս գնումների գծով կրեդիտորական պարտքերը, որոնց կառուցվածքը հետևյալն է.


	31.12.06թ.	%	31.12.05թ.	%	31.12.04թ.	%
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով						
Հումք, նյութերի գծով	768	0.2	408	0.2	27,628	2.9
Ապրանքների գծով	417,740	78.9	179,076	72.1	931,746	96.1
Ծառայությունների գծով	10,901	2.1	7,069	2.8	5,963	0.6
Հիմնական միջոցների գծով	99,250	18.7	61,000	24.6	-	-
Այլ գնումների գծով	765	0.1	766	0.3	3,735	0.4
Ընդամենը	529,424	100	248,319	100	969,072	100

Առանձին հարկատեսակների գծով կրեդիտորական պարտքերը բյուջեին 2004-2006թթ. եղել են հետևյալը.

	31.12.06թ.	%	31.12.05թ.	%	31.12.04թ.	%
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին						
Շահութահարկի գծով	-	-	-	-	2,210	78.6
Եկամտահարկի գծով	-	-	633	8.4	-	-
Գույքահարկի գծով	325	8.1	423	5.6	302	10.7
Մաքսատուրքի գծով	3,684	91.8	5,215	69.4	-	-
Հաստատագրված վճարների գծով	-	-	1,144	15.2	-	-
Այլ հարկատեսակների գծով	4	0.1	105	1.4	300	10.7
Ընդամենը	4,013	100	7,520	100	2,812	100

Կրեդիտորական պարտքերի մարումը հիմնականում իրականացվելու է պայմանագրերով նախատեսված ժամկետներում:

դ) Թողարկողը 2007 թվականի ընթացքում պլանավորել է կապիտալ ծրագրեր իրականացնել մի շարք ուղղություններով: Ըստ առանձին ուղղությունների ներդրումային նախագծերի բնութագրերը ներկայացված են հետևյալ գծապատկերում.



**Ներդրումային
ուղղությունները**

**Նախագծի բովանդակությունը և
ֆինանսավորման ծավալները**

ստեղծում

միջոցով սրճարանների ցանցի գործարկում
Ընդամենը ներդրումներ՝ 248,000 ԱՄՆ դոլար

Մասների արտադրության և վերամշակման գործունեությունը Թողարկողը նախատեսում է ամբողջությամբ փոխանցել նոր հիմնադրված ընկերությանը, հետևաբար նախագծի իրականացումը սեփական կապիտալի և պարտավորությունների վրա որևէ ազդեցություն չի ունենա:

Ինչ վերաբերվում է մյուս նախագծերին, ապա դրանց ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել հետևյալ աղբյուրներից.

- Սրճարանների ցանցի ստեղծման նախագծերի ֆինանսավորումն իրականացվելու է սույն ազդագրի շրջանակներում թողարկվող պարտատոմսերից հավաքագրվող միջոցների հաշվին:
- Ֆինանսավորման մնացած մասը նախատեսվում է իրականացնել մասամբ բաժնետիրոջ անհատույց փոխառությունների տեսքով ներդրումների հաշվին, մասամբ՝ պարտատոմսերի հետագա թողարկումներից առաջացած միջոցների հաշվին:

Սեփական կապիտալի և պարտավորությունների միջև էական փոփոխություններ չեն սպասվում:

ե) Թողարկողի գործունեության արդյունքների վերաբերյալ ամփոփ տվյալները ներկայացված են հաջորդ աղյուսակում.

	<u>2006թ.</u>	<u>2005թ.</u>	<u>2004թ.</u>
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից հասույթ	4,132,690	3,724,749	3,748,104
Համախառն շահույթ/(վնաս)	607,923	437,654	275,385
Գործառնական շահույթ/(վնաս)	171,179	36,689	(8,338)
Չուտ շահույթ/(վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	398,055	306,334	167,477
Չուտ շահույթ/(վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	385,026	299,683	162,980

Ինչպես պարզ է դառնում աղյուսակից, Թողարկողի զուտ շահույթը կայուն աճի միտում ունի: Այսպես, 2004 թվականի համեմատությամբ 2005թ. և 2006թ. զուտ շահույթի աճը կազմել է համապատասխանաբար 83.9% և 136.24%:

Հարկ է նշել, որ ֆինանսական արդյունքների ներկայացված ցուցանիշներում ներառված են նաև ընդհատված գործառնություններից ստացված արդյունքները: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ մինչև 2006թ. հուլիսը Թողարկողի կողմից շահագործվում էր «Սթար» սուպերմարկետների ցանցը, որն այնուհետև փոխանցվել է «Սթար Դիվայդ» ՓԲԸ-ին: Գործառնության ընդհատման հետ կապված՝ «Սթար» սուպերմարկետներում առկա ապրանքերը և նրա հետ կապված հիմնական միջոցները վաճառվել են «Սթար Դիվայդ» ՓԲԸ-ին, իսկ սուպերմարկետների համար նախատեսված ֆինանսական վարձակալությամբ ստացված սարքավորումները վերջինիս են հանձնվել ենթավարձակալությամբ: Գործառնության ընդհատման արդյունքում մոտ 70 աշխատակից Թողարկողից տեղափոխվել է «Սթար Դիվայդ» ՓԲԸ: Ընդհատված գործառնությանը վերաբերող եկամուտներն ու ծախսերը, ինչպես նաև գործառնության ընդհատման հետ կապված ակտիվների վաճառքից շահույթները (վնասները) ներկայացված են ստորև.

	<u>2006թ.</u>	<u>2005թ.</u>	<u>2004թ.</u>
<u>Ընդհատված գործառնություններ</u>			
Հասույթներ	109,742	70,268	21,892
Համախառն շահույթ/(վնաս)	50,317	29,954	8,118
Շահույթ (վնաս) մինչև հարկումը	30,206	23,101	3,004
Ընդհատված գործառնության հիմնական միջոցների օտարումից շահույթ (վնաս) մինչև հարկումը	43,568	-	-
Ընդհատված գործառնության ապրանքների օտարումից շահույթ (վնաս) մինչև հարկումը	9,343	-	-
Շահույթ (վնաս) ընդհատված գործառնություններից	<u>72,417</u>	<u>20,501</u>	<u>2,404</u>

Ինչ վերաբերվում է 2004-2006թթ. գործառնական շահույթի և զուտ շահույթի միջև առկա զգալի տարբերություններին, ապա պետք է նշել, որ նշված ժամանակահատվածում Թողարկողը ստացել է նաև այլ ոչ գործառնական շահույթ, ընդ որում՝ դրա զգալի մասը կազմում է արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ստացված շահույթը: Մասնավորապես՝ 2004-2006թթ. արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ստացված շահույթը կազմել է համապատասխանաբար 235,627 հազ., 252,876 հազ. և 428,359 հազ. ՀՀ դրամ:

զ) 2006 թվականին Թողարկողի հասույթի ծավալը կազմել է 4,132,690 հազ. դրամ և 2005 թվականի տարեկան հասույթի (3,724.7 մլն դրամ) համեմատությամբ աճել է շուրջ 11%-ով, իսկ 2004 թվականի հասույթի (3,748.1 մլն դրամ) համեմատությամբ՝ շուրջ 10%-ով:

2005 թվականի համեմատությամբ 2006 թվականի հասույթի աճը հիմնականում պայմանավորված է ապրանքների մեծածախ վաճառքից հասույթի աճով, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է շուրջ 188%-ով, իսկ ընդհանուր հասույթում կազմել է 16%: Բացի այդ 2006թ. հասույթի ցուցանիշում ներառված են նաև ընդհատված գործառնության արդյունքում հիմնական միջոցների և ապրանքների օտարումից ստացված եկամուտները՝ 52,911 հազ. դրամի չափով:

Գների աճը կամ նվազումը Թողարկողի եկամտի վրա էական ազդեցություն չեն ունեցել:

է) Սղաճը և գների փոփոխությունը Թողարկողի հասույթի ու եկամտի վրա էական ազդեցություն չեն ունեցել:

6.3. 31.03.2007թ. դրությամբ Թողարկողի հաշվապահական հաշվեկշիռն ունի հետևյալ տեսքը,

	<u>31.03.2007թ.</u>	<u>փոփ. նախորդ տարվա նկ.</u>
Ոչ ընթացիկ ակտիվներ	271,957	1.44%
Ընթացիկ ակտիվներ	3,360,041	15.58%
Ընդամենը ակտիվներ	<u>3,631,998</u>	<u>14.38%</u>
Մեվական կապիտալ	<u>1,057,685</u>	<u>2.13%</u>
Ոչ ընթացիկ պարտավորություններ	1,095,669	-1.51%
Ընթացիկ պարտավորություններ	1,478,644	43.95%
Ընդամենը պարտավորություններ	<u>2,574,313</u>	<u>20.31%</u>

2007թ. առաջին եռամսյակի ֆինանսական արդյունքները հետևյալն են.

	<u>2007թ.</u>
Հասույթ	794,744
Համախառն շահույթ	114,419
Զուտ շահույթ	<u>22,095</u>

Ինչպես երևում է 2007թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ Թողարկողի ակտիվներն ավելացել են 14.38%-ով, որը հիմնականում պայմանավորված է ընթացիկ ակտիվների, մասնավորապես՝ պաշարների, դրամական միջոցների և բյուջեի գծով դեբիտորական պարտքերի ավելացմամբ:

Թողարկողի սեփական կապիտալի ավելացումը պայմանավորված է եռամսյակի արդյունքներով 22,095 հազ. դրամ շահույթի ստացմամբ: Ընթացիկ պարտավորությունների զգալի աճը հիմնականում տեղի է ունեցել ի հաշիվ ստացված ընթացիկ կանխավճարների և կարճաժամկետ բանկային վարկերի ավելացման: Ընթացիկ իրացվելիության ցուցանիշը 31.03.2007թ. դրությամբ կազմում է 2.27:

6.4 Աուդիտորների հետ հաշվապահական հաշվառման և ֆինանսական տեղեկատվության բացահայտման հետ կապված անհամաձայնություններ չեն եղել:

Մենք՝ սույն վերլուծությունը կատարող Թողարկողի տնօրեն Շ. Ստեփանյանը և գլխավոր հաշվապահ Կ. Սամսոնյանը, տալիս ենք մեր համաձայնությունը, որպեսզի այս վերլուծությունն օգտագործվի հայտարարագրի մեջ, որի համար ստորագրում ենք՝

«Վալլետա» ՍՊԸ
Տնօրեն՝

Շահեն Ստեփանյան

Գլխավոր հաշվապահ՝

Կարեն Սամսոնյան

29.06.2007թ.

ԳԼՈՒԽ 7. Տեղեկություններ թողարկողի գործունեության վերաբերյալ

7.1. Թողարկողի գործունեության նկարագրությունը.

7.1.1. Թողարկողը վարում է դիվերսիֆիկացված գործունեություն: Ներկայումս Թողարկողի կողմից իրականացվող գործունեության հիմնական ոլորտները կարելի է դասակարգել հետևյալ խմբերում.

- մեծածախ և մանրածախ առևտուր,
- կենցաղային տեխնիկայի ներմուծում և վաճառք (Ariston և Ardo կենցաղային տեխնիկայի վաճառք «Կոմֆորտ» և «Կոմֆորտ+» խանութների ցանցի միջոցով),
- մսամթերքի վերամշակում և արտադրություն (Բիելլա մսամթերք),
- սուրճի արտադրություն և թեյի փաթեթավորում (Պրեմիեր սուրճ, Շերրի թեյ),
- Fast food և ժամանցային ծառայություններ (SFC Express, AFC Express և Պլենետ ռեստորաններ):

2006 թվականի մարտից Թողարկողը զբաղվում է նաև արտարժույթի առքուվաճառքի գործունեությամբ՝ ՀՀ ԿԲ-ի կողմից տրված արտարժույթի առքուվաճառքի իրականացման լիցենզիաների հիման վրա: Այնուամենայնիվ, գործունեության այս ուղղությունը Թողարկողի կողմից չի դիտարկվում որպես հիմնական:

Թողարկողի կողմից ներկայացվող հիմնական ապրանքանիշերն են՝

Արտադրություն

PREMIER
Coffee



Ծառայություններ



Ներմուծում
և առևտուր



GENEX
tea.



Minu



Թողարկողի կողմից իրականացվող հիմնական գործունեության ոլորտների զարգացման վերաբերյալ կարելի է ասել, որ բոլոր ոլորտները ներկայումս դինամիկորեն զարգացում են ապրում, օրեցօր ավելանում են մեծածախ և մանրածախ առևտրով, կենցաղային տեխնիկայի ներմուծմամբ և վաճառքով զբաղվող, ժամանցային ծառայություններ մատուցող, մսամթերքի և սուրճի արտադրությամբ զբաղվող անձանց քանակը, ինչպես նաև այդ ոլորտներում սպառման ծավալները: Վերջինս պայմանավորված է ինչպես տնտեսական աճի պայմաններում հասարակության վճարունակության բարձրացման (այդ թվում՝ նրանց համար վարկային ռեսուրսների մատչելի դառնալու) հանգամանքով, այնպես էլ տվյալ ոլորտում գործող անձանց կողմից մատուցվող ծառայությունների և սպասարկման որակի բարձրացմամբ: Ապրանքների ներմուծման համար վերջին տարիներին բարենպաստ ազդեցություն է ունեցել նաև ՀՀ դրամի արժեվորումը: Նշված ոլորտների աճի մասին են վկայում Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված պաշտոնական տվյալները, ինչպես նաև Թողարկողի կատարած ուսումնասիրությունների արդյունքները: Ավելին, ոլորտների զարգացման աճին զուգահեռ մեծանում է մրցակցությունը: Վերջին տարիներին նշված ոլորտում գործող սուբյեկտների գործողություններն ուղղված են դեպի սպառողը և նրա պահանջմունքները: Թողարկողի գործունեությունը նույնպես ուղղված է դեպի սպառողը, այսինքն՝ Թողարկողը մեծ

ուշադրություն է դարձնում ծառայությունների և սպասարկման որակի բարձրացման վրա, վարում է ճկուն գնային և մարկետինգային քաղաքականություն: Թողարկողի գործունեության ոլորտների ներկայիս իրավիճակը թույլ է տալիս գնահատել, որ մոտ ապագայում բոլոր ոլորտների աճի միտումը կպահպանվի, ինչպես նաև դրան գուզրնթաց կավելանա հնարավոր մասնակիցների թիվը: Հարկ է նշել, որ նշված ոլորտներում մրցակցության աճի պայմաններում Թողարկողի արտադրանքի և ծառայությունների ծավալները աճի միտում են ցուցաբերել: Ոլորտների և մրցակցության վերաբերյալ մանրամասնությունները բերված են սույն գլխի մյուս մասերում:

Ոլորտների զարգացման և մրցակցության աստիճանի մեծացման պարագայում Թողարկողը պլանավորել է ներքին շուկայում մեծածախ և մանրածախ վաճառքի ոլորտներում յուրաքանչյուր տարի ավելացնել իր մասնաբաժինը 1%-ով: Բացի այդ, 2007 թվականին նախատեսվում է նաև մի քանի ուղղություններով ընդլայնել գործունեությունը, մասնավորապես՝

1. Բիելլա մասնաբաժնի արտադրության ընդլայնում (բարձրորակ արտադրանքի թողարկում և նոր արտադրատեսակների արտադրություն),
2. SFC և AFC արագ սննդի կետերի ցանցի ընդլայնում,
3. «Կոմֆորտ» և «Կոմֆորտ+» խանութների ցանցի ընդլայնում:

Թողարկողը նախատեսում է նաև մուտք գործել գործունեության նոր ոլորտ՝ գործարկել սրճարանների ցանց (coffee house): Այս ոլորտում էլ պատկերը գրեթե նույնն է, քանի որ ժամանցային ծառայությունների ոլորտը դինամիկ զարգացում է ապրում, ինչը նույնպես պայմանավորված է ինչպես այդ ոլորտի ծառայությունների սպառողների պահանջմունքների աճով, այնպես էլ շուկայի մասնակիցների կողմից որակյալ ծառայությունների մատուցման հանգամանքով:

2007 թվականից սկսած Թողարկողը նախատեսում է ընդլայնել նաև արտահանման ծավալները:

Ըստ գործունեության յուրաքանչյուր ոլորտի Թողարկողի գրաված դիրքի վերաբերյալ տվյալները ներկայացված են սույն գլխի 7.1.7. կետում:

7.1.2. Թողարկողի արտադրանքի սպառման ներքին շուկաների ընդհանուր բնութագիրը կարելի է ներկայացնել ըստ երկու հիմնական ուղղությունների.

- Մեծածախ առևտուր. համաձայն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված պաշտոնական տվյալների՝ մեծածախ առևտրի ոլորտում աճը 2004թ.-ին նախորդ տարվա նկատմամբ կազմել է 1%, իսկ 2005թ.-ին՝ 19%:
- Մանրածախ առևտուր. մանրածախ առևտրի ոլորտում 2004 և 2005 թվականների տարեկան աճը համապատասխանաբար կազմել է 8% և 15%:

Թողարկողը 2006 թվականի պաշտոնական տվյալների վերաբերյալ դեռևս տեղեկություններ չունի:

Ներքին շուկայում ներմուծվող և տեղական արտադրանքի տոկոսային հարաբերակցությունը ըստ Թողարկողի կողմից վաճառվող առանձին արտադրատեսակների ներկայացվում է ստորև՝ հիմնվելով Թողարկողի կողմից իրականացված դիտարկումների վրա (հաշվի առնելով նմանատիպ պաշտոնական տեղեկատվության բացակայությունը).

- կենցաղային տեխնիկա և սարքավորումներ՝ 100% ներմուծում,
- կարագ՝ 100% ներմուծում,
- սուճ և թեյ՝ 100% ներմուծում,
- ձիթապտուղ՝ 100% ներմուծում,
- մասնաբաժնի՝ 80% ներմուծում, 20% տեղական,
- թռչնամիս՝ 30% ներմուծում, 70% տեղական:

Թողարկողի կողմից արտադրվող սուրճը ներկայումս արտահանվում է միայն Վրաստան: Ընդհանուր վաճառքի ծավալներում արտահանման մասնաբաժինը կազմում է 1.02%: Վրացական շուկայի ընդհանուր բնութագրի և դրա զարգացման միտումների վերաբերյալ Թողարկողի ունեցած տեղեկատվությունը թույլ է տալիս գնահատել, որ տնտեսական կայունությունը և տնտեսական ակտիվությունը կնպաստեն Վրաստանում այդ շուկայի ծավալների աճին և, միաժամանակ, մրցակցության բարձրացմանը: Այնուամենայնիվ, Թողարկողը պլանավորում է ավելացնել իրացման ծավալները Վրաստանում՝ արտադրանքի որակի բարձրացման, գնային և

մարկետինգային ակտիվ քաղաքականություն վարելու միջոցով (անկախ այն հանգամանքից, որ Թողարկողի արտահանման ծավալները դեռևս չեն ցուցաբերում աճի միտում):

Առաջիկայում Թողարկողը նախատեսում է ընդլայնել սուրճի և մսամթերքի արտահանումը՝ մուտք գործելով Ռուսաստանի և Իրանի շուկաներ:

Թողարկողի սպառողներն են հանդիսանում ամենատարբեր կազմակերպություններ (մեծածախ առևտրի ոլորտում), ինչպես նաև բնակչության լայն շերտերը, որոնք օգտվում են Թողարկողի խանութների ցանցերից և սննդի սպասարկման կետերից:

Քանի որ Թողարկողը գործունեություն է ծավալում տարբեր ուղղություններով, դրանցից յուրաքանչյուրում նրա մրցակիցները տարբեր են: Մրցակիցների վերաբերյալ առավել ամբողջական տեղեկությունները ներկայացված են սույն գլխի 7.1.7. կետում:

7.1.3. 2007 թվականի սկզբից Թողարկողը նպատակ ունի մուտք գործել իր համար մինչ այժմ նոր գործունեության ոլորտ՝ գործարկել սրճարանների ցանց (coffee house):

Սրճարանային շուկան կարելի է դիտարկել որպես դինամիկ զարգացող և մրցակցային: Հատկապես Երևան քաղաքում դեռևս ԽՍՀՄ փլուզումից հետո և անցումային վաղ շրջանից սկսած տարեցտարի ավելացել են սրճարանային (ժամանցային, որի կազմում ընդգրկվում է նաև սրճարանային) ծառայություններ մատուցող անձանց քանակը և այդ ծառայությունների տեսականին: Նման իրավիճակը պայմանավորված է այդ ծառայությունների նկատմամբ սպառողների պահանջարկի աճով: Հետևաբար, Թողարկողը հետաքրքրված է մուտք գործել և գործունեություն ծավալել այս ոլորտում: Այդ նպատակով էլ Թողարկողը 2007 թվականի սկզբից բանակցություններ է վարում մի շարք հանրահայտ սուրճի ապրանքանիշեր ներկայացնող ընկերությունների ներկայացուցիչների հետ՝ Երևանում այդ ապրանքանիշերի ֆրանչայզինգի հիման վրա սրճարանների ցանց ստեղծելու համար: Նախատեսվում է առաջին սրճարանը բացել 2007 թվականի ընթացքում: Նմանատիպ նախագիծ Հայաստանում առաջին անգամ է իրականացվելու, և ներկայումս այդ ուղղությամբ շուկայում մրցակիցներ չկան:

7.1.4. Թողարկողի եկամտի մեծ մասը վերջին երեք տարիներին ապահովել է ապրանքների մանրածախ վաճառքը: 2006 թվականին ապրանքների մեծածախ վաճառքը ևս ապահովել է Թողարկողի եկամտի 10%-ից ավելին: Հաջորդ աղյուսակում ներկայացված են գործունեության նշված ուղղություններից ստացված հասույթի ծավալները դրամական արտահայտությամբ, ինչպես նաև դրանց մասնաբաժինը հասույթի ընդհանուր ծավալում վերջին երեք տարիների կտրվածքով՝ ըստ առանձին տարիների:

	2006թ.		2005թ.		2004թ.	
	հազ. ՀՀ դրամ	%, հաս. նկատմամբ	հազ. ՀՀ դրամ	%, հաս. նկատմամբ	հազ. ՀՀ դրամ	%, հաս. նկատմամբ
Հասույթ ապրանքների մանրածախ վաճառքից	2,732,114	71.46%	2,976,314	81.46%	3,223,818	86.52%
Հասույթ ապրանքների մեծածախ վաճառքից	660,286	17.27%	229,488	6.28%	183,136	4.91%

Թողարկողն իր կողմից արտադրված սուրճն արտահանում է Վրաստան: Վերջին երեք տարիների կտրվածքով արտահանված սուրճի սպառման ծավալները հետևյալն են՝

- 2004թ.՝ 57 մլն ՀՀ դրամ,
- 2005թ.՝ 68 մլն ՀՀ դրամ,
- 2006թ.՝ 51 մլն ՀՀ դրամ:

Թողարկողը սեզոնային բնույթ ունեցող գործունեության տեսակներով չի զբաղվում:

Թողարկողը հավասարապես կարևորում է իր կողմից իրականացվող հիմնական գործունեության բոլոր ուղղությունները: Դրանցից որևէ մեկը նրա համար զերիշխող կամ առաջնային նշանակություն չունի:

7.1.5. Թողարկողի արտադրանքի իրացման հիմնական մեթոդներն ու ուղիները ըստ գործունեության առանձին տեսակների ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

Գործունեության ոլորտը	Իրացման մեխանիզմները
Մանրածախ և մեծածախ առևտուր	Թողարկողն ունի իրացման զարգացած ցանց: Մեծածախ վաճառքը հիմնականում իրականացվում է ք. Երևան, Աէրացիա 1 հասցեում տեղակայված պահեստից: Մանրածախ վաճառքը կազմակերպվում է Թողարկողի “Master Foods” ստորաբաժանման միջոցով՝ օգտագործելով ՀՀ ողջ տարածքում տեղակայված ավելի քան 150 մանրածախ վաճառակետեր՝ ներառյալ «Սթար» սուպերմարկետների ցանցը:
Կենցաղային տեխնիկա	Կենցաղային տեխնիկայի վաճառքն իրականացվում է ինչպես մեծածախ վաճառակետերի, այնպես էլ Թողարկողին պատկանող «Կոմֆորտ» և «Կոմֆորտ+» մասնագիտացված խանութների ցանցի միջոցով:
Սուրճ	Սուրճի վաճառքի ուղիներն են տարբեր խանութները, սրճարաններն ու ռեստորանները: Սուրճի արտահանումն իրականացվում է իրացման մեծածախ ցանցի միջոցով:
Մսամթերք	Բիելլա մսամթերքը վաճառվում է հանրապետության ավելի քան 170 վաճառակետերում: Արտադրանքն առաքվում է Թողարկողին պատկանող և հատուկ մսամթերքի տեղափոխման համար նախատեսված մեքենաներով: 2007 թվականին Թողարկողը նախատեսում է բացել հատուկ շարժական խանութ:

Թողարկողի արտադրանքի իրացման գործում միջնորդ կազմակերպություններ ներգրավված չեն:

Ինչպես արդեն նշվել է, ներկայումս Թողարկողն իր արտադրանքն արտահանում է միայն Վրաստան: Արտադրանքի տեղափոխումն իրականացվում է մեքենաների միջոցով:

7.1.6. Թողարկողի սպառողներին պայմանականորեն կարելի է տարանջատել երկու խմբում՝ կազմակերպություններ և ֆիզիկական անձինք:

Մեծածախ վաճառքի գծով սպառողները հիմնականում տարբեր ոլորտներում գործող կազմակերպություններն են, որոնց կարելի է տարանջատել հետևյալ խմբերում.

Սուպերմարկետներ / մթերային խանութներ	Մսամթերք արտադրող ընկերություններ	Մեծածախ առևտրով զբաղվող ընկերություններ	Էլեկտրոնիկայի վաճառակետեր	Կաթնամթերքի արտադրությանը զբաղվող ընկերություններ
Ունիվերսամ ՍՊԸ Ունիվերսամ Ավան ՍՊԸ Էդ & ժակ ՍՊԸ «Սթար Դիվայդ» ՓԲԸ	Բարի արագիլ Սոս-97 Լինդա Աթենք Բարի Սամարացի Արդելիկատես	Կոնստանտ Եվրոթերմ	A-D-S-x ՍՊԸ Սալի Գուր	Աշտարակ կաթ

Թողարկողի կողմից առաջարկվող ծառայություններից, ինչպես նաև տարբեր ապրանքատեսակների մանրածախ վաճառքից օգտվում են նաև բնակչության տարբեր շերտերը՝ անկախ տարիքից և նախասիրություններից:

Ներկայումս չկան այնպիսի սպառողներ, որոնց բաժին է ընկնում Թողարկողի արտադրանքի իրացումից կամ ծառայությունների մատուցումից ստացված հասույթի 10 տոկոսից ավելին: Թողարկողի արտադրանքի առավել խոշոր սպառողներն են «Աշտարակ Կաթ» ՓԲԸ-ն, «Արդելիկատես» ՍՊԸ-ն, «Բարի Սամարացի» ՍՊԸ-ն և «Բիո Ֆուդ» ՍՊԸ-ն:

7.1.7. Մսամթերքի և կարագի ներմուծումը Թողարկողի շրջանառության զգալի մասն է կազմում և առաջիկայում նախատեսվում է այս շուկայում մասնաբաժինը հասցնել մինչև 30%՝ արդյունավետ օգտագործելով իրացման արդեն իսկ ձևավորված ցանցը: Շուկայում Թողարկողի հիմնական մրցակիցը «ՍԱԼԵԶՍ Գրուպ»-ն է: Մսամթերքի և կարագի շուկայում խոշոր ներմուծող է նաև «Լիա» ՍՊԸ-ն:

Թռչնամսի շուկայում գերիշխող դիրք են գրավում տեղական արտադրողները («Արաքս», «Լուսակերտ» և «Արզնի»): Ներմուծվող արտադրանքը բաժին է ընկնում 5 հիմնական ներմուծող ընկերությունների: Այս ոլորտում Թողարկողի շուկայական մասնաբաժինը կազմում է մոտ 20%՝ իր կողմից ներմուծված Languru ապրանքանիշով: Շուկայում ներմուծված մյուս հիմնական տեսականիներն են Sadia, Doux և Avepal ապրանքանիշերը:

Թողարկողը ներմուծում է նաև **ձիթապտուղ**: Նրա ներկայացրած Crespo ապրանքանիշը գրավում է տեղական ձիթապտղի շուկայի 25-30%-ը, որտեղ գերիշխող դիրքը պատկանում է Coopoliva ապրանքանիշին:


Ariston և Ardo ֆիրմաների կողմից արտադրված կենցաղային տեխնիկայի ներմուծումն ու վաճառքը տարեցտարի Թողարկողի համար գործունեության ավելի նշանակալից ուղղություն է դառնում: Որպես օրինակ կարելի է նշել, որ Թողարկողի կողմից շուկայում ներկայացված Ariston ապրանքանիշի ջրատաքացուցիչների մասնաբաժինը հանրապետությունում այդ արտադրատեսակի վաճառքի ընդհանուր ծավալում հասնում է մոտ 80%-ի: Թողարկողի կողմից ներկրված Ariston զազի կաթսաները շուկայում մրցակցում են միջին գնային մակարդակում գտնվող այնպիսի արտադրատեսակների հետ, ինչպիսիք են Baxi, Electrolux և Euroterm ապրանքանիշերը: Ավելի բարձր գնային սեգմենտում, որպես մրցակիցներ՝ ներկայացված են Berretta, Mora, Ferolli և Wiseman ապրանքանիշերը: Յածր գնային սեգմենտը ներկայացնում են Olymp, Mercury և Kiturami ապրանքատեսակները:

Թողարկողը ներկայացնում է նաև Ardo ապրանքանիշով կենցաղային այլ տեխնիկա, այդ թվում՝ սառնարաններ, լվացքի մեքենաներ, զազօջախներ և այլն, և այս շուկայում մրցակցային միջավայրը բավական հազեցած է: Շուկայում ներկայացվում են նաև Հայաստան ներկրված 10 այլ ապրանքանիշեր, որոնցից են Indezit, Zanussi, Beko ապրանքանիշերը:

Թողարկողի կողմից վաճառվող վերոնշյալ տեխնիկան հիմնականում վաճառվում է Թողարկողին պատկանող «Կոմֆորտ» և «Կոմֆորտ+» խանութների ցանցի միջոցով:


Թողարկողը շահագործում է նաև **SFC Express և AFC Express հանրային սննդի սպասարկման (fast food) ցանցերը**: Այս ոլորտում որպես Թողարկողի մրցակիցներ կարելի է առանձնացնել Queen Burger-ը, Թումանյանի Շաուրման և Mr. Toaster-ը: Այնուհանդերձ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ SFC-ն Երևանում միակն է, որն առաջարկում է իրական արևմտյան fast food ցանցերին բնորոշ սպասարկում:

Հանրապետությունում **սուրճի շուկայի** տարողությունը մոտ 350 տոննա է: Թողարկողն իր Պրեմիեր ապրանքանիշով գրավում է շուկայի մոտ 13-14%-ը: Որպես Թողարկողի հիմնական մրցակիցներ պետք է դիտարկել հետևյալ ընկերություններին՝ Ֆերո, Ռոյալ Արմենիա, Կարդինալ, Օրգինալ: Շուկայում ներկայացված են նաև բարձր գնային սեգմենտին պատկանող սուրճի տեսակներ, ինչպիսիք են Փարիզյան սուրճը և Իլլին: Այս ապրանքատեսակները չեն դիտարկվում որպես Premier-ի մրցակիցներ:



Մասնաբերքի շուկայի հիմնական մասնակիցներն են հետևյալ ապրանքատեսակները՝ Սիկոյան, Ջարիցինո, Գեդարո, Աթենք, Բարի Սամարացի, Բիլյան, Մուշ, Գայանե և այլն: Առաջարկվող արտադրանքն ըստ գնի և որակի մակարդակների կարելի է առանձնացնել 4 սեգմենտում՝ պրեմիում+, պրեմիում, միջին, ցածր: Թողարկողի կողմից առաջարկվող Բիելլա մասնաբերքը մրցակցում է գնի և որակի միջին մակարդակում այնպիսի ապրանքատեսակների հետ, ինչպիսիք են Բարի Սամարացին, Մուշը, Գայանեն և Արարատը:

Հայաստանում երշիկեղենի շուկայի ծավալը կազմում է մոտ 1000-1100 տոննա: Ստորև ներկայացվում են շուկայի հիմնական մասնակիցների մասնաբաժինները:



7.1.8. Ապրանքների բոլոր մատակարարումների 10 տոկոսից ավելին բաժին է ընկնում հետևյալ 2 ընկերություններիին՝

- Hormozi Trading (Միացյալ Արաբական Էմիրություններ, Գուբայ): Ընկերությունը մատակարարում է տարբեր տեսակի սննդամթերքներ, այդ թվում՝ մասնաբերք, ձիթապտուղ, կարագ, հավի միս, նրբերշիկ, թեյ և այլն: Մատակարարումների ընդհանուր ծավալում նշված ընկերության մասնաբաժինը 60% է:
- Merloni Thermosanitar (Իտալիա). այս ընկերությունը մատակարարում է Ariston ապրանքանիշը: Ընկերության մասնաբաժինը մատակարարումների ընդհանուր ծավալում կազմում է 15%:

Ներմուծման հիման վրա մատակարարումների տեսակարար կշիռներն ըստ առանձին ուղղությունների հետևյալն են.

- Բիելլա մասնաբերքի արտադրության համար անհրաժեշտ մսի 99.5%-ը ներմուծված է, 0.5%-ը ձեռք է բերվում տեղական շուկայում,
- SFC հանրային սննդի սպասարկման կետերում օգտագործվող հումքի 70-75%-ը ներմուծված է, 25-30%-ը (համբուրգերների պատրաստման ընթացքում օգտագործվող միս, հաց, անձեռոցիկներ և այլն) ձեռք է բերվում ներքին շուկայում,

- Պլենեռո ռեստորանում օգտագործվող հումքի 40%-ը ներմուծվում է, մնացած 60%-ը ձեռք է բերվում ներքին շուկայից:

Հաշվի առնելով մատակարարների հետ ձևավորված հարաբերությունները, մոտ ապագայում Թողարկողը չի կանխատեսում մատակարարումների որևէ խափանում:

7.1.9. Պետությունն ըստ էության էական դեր կարող է ունենալ Թողարկողի կողմից վարվող գործունեության գրեթե բոլոր ոլորտներում: Օրինակ՝ պետության կողմից հնարավոր են նոր սանիտարահիգիենիկ նորմերի սահմանում կամ կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունում, որոնք զգալի դեր կարող են ունենալ Թողարկողի գործունեության վրա:

7.1.10. Նախորդ երեք ֆինանսական տարիներից յուրաքանչյուրի համար Թողարկողի կողմից հարկային պարտավորությունների դիմաց վճարված և հաշվարկված գումարները՝ ըստ առանձին տարիների և հարկատեսակների, ներկայացված են հետևյալ աղյուսակում.

N	Հարկատեսակը	2004թ.		2005թ.		2006թ.	
		Վճարված	Հաշվարկված	Վճարված	Հաշվարկված	Վճարված	Հաշվարկված
1.	Եկամտահարկ	423,500	423,500	6,380,277	7,014,494	9,865,000	9,231,948
2.	Հաստատագրված վճար	12,187,600	11,659,200	12,840,450	13,984,550	18,508,700	17,364,600
3.	Շահութահարկ	5,335,800	4,497,000	4,280,900	6,651,000	39,944,210	13,029,000
4.	Սոց. այ. վճար	4,780,900	4,932,142	30,320,000	30,389,189	35,650,000	39,036,274
5.	Գույքահարկ	715,900	1,018,100	897,700	1,037,086	2,731,852	2,484,720
6.	Մաքսատանը վճարված ԱԱՀ	812,270,000	825,567,928	795,940,000	833,806,721	797,712,000	718,978,438
7.	ԱԱՀ	-	741,130,617	-	763,526,863	10,000,000	960,418,404
	Ընդամենը	835.713.700	1.589.228.487	850.659.327	1.656.409.903	914.411.762	1.760.543.384

7.1.11. Թողարկողը չի օգտվում օրենքներով և այլ իրավական ակտերով վերապահված որևէ հարկային արտոնությունից: Թողարկողի համար սահմանված հատուկ հարկային արտոնություններ չկան:

7.2. Նախորդ երեք տարիներին Թողարկողի նկատմամբ կիրառվել են հետևյալ պատասխանատվության միջոցները.

N	Պատասխանատվության ենթարկող մարմինը, կիրառման ամսաթիվը	Պատասխանատվության ենթարկելու հիմքերը (պատճառները)	Տեսակը, չափը և կատարման աստիճանը
1.	12.02.2004թ. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն	ՀՀ կառավարության 31.07.1997թ. թիվ 315 որոշման պահանջների խախտում: Հիմքը՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28 հոդված:	Տուգանք՝ 2,062,000 ՀՀ դրամ Պարտավորությունն ամբողջությամբ կատարված է
2.	17.03.2004թ. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն	Բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման արդյունքում ԱԱՀ-ի գումարի ավելացում: Հիմքը՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25 հոդված:	Լրացուցիչ գանձվող հարկի գումար՝ 11,252,900 ՀՀ դրամ Տուգանք՝ 6,766,700 ՀՀ դրամ Պարտավորությունն ամբողջությամբ կատարված է
3.	05.10.2004թ. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն	ՀՀ կառավարության 31.07.1997թ. թիվ 314 և 315 որոշումների պահանջների կատարման ստուգման արդյունքում հայտնաբերված խախտում: Հիմքը՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28 հոդված:	Տուգանք՝ 1,025,900 ՀՀ դրամ Պարտավորությունն ամբողջությամբ կատարված է
4.	27.10.2004թ. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն	ՀՀ կառավարության թիվ 298 որոշման պահանջների խախտում: Հիմքը՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28 ¹ հոդված:	Տուգանք՝ 300,000 ՀՀ դրամ Պարտավորությունն ամբողջությամբ կատարված է

N	Պատասխանատվության ենթարկող մարմինը, կիրառման ամսաթիվը	Պատասխանատվության ենթարկելու հիմքերը (պատճառները)	Տեսակը, չափը և կատարման աստիճանը
5.	06.04.2005թ. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն	Բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման արդյունքում շահութահարկի և ԱԱՀ-ի գումարի ավելացում: Հիմքը՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25, 27 հոդվածներ:	Լրացուցիչ գանձվող հարկի գումար՝ 16,844,000 ՀՀ դրամ Տուգանք՝ 10,106,400 ՀՀ դրամ Պարտավորությունն ամբողջությամբ կատարված է
6.	27.05.2005թ. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն	ՀՀ կառավարության 16.08.2004թ. թիվ 1395 որոշման պահանջների խախտում: Հիմքը՝ «Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11 հոդված:	Տուգանք՝ 75,000 ՀՀ դրամ Պարտավորությունն ամբողջությամբ կատարված է
7.	17.06.2005թ. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն	ՀՀ կառավարության 31.07.1997թ. թիվ 314 որոշման պահանջների խախտում: Հիմքը՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28 հոդված:	Տուգանք՝ 2,501,700 ՀՀ դրամ Պարտավորությունն ամբողջությամբ կատարված է
8.	19.10.2005թ. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն	ՀՀ կառավարության 31.07.1997թ. թիվ 314 և 315 որոշումների պահանջների կատարման ստուգման արդյունքում հայտնաբերված խախտում: Հիմքը՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28 հոդված:	Տուգանք՝ 2,502,500 ՀՀ դրամ Պարտավորությունն ամբողջությամբ կատարված է
9.	30.01.2006թ. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն	ՀՀ կառավարության 31.07.1997թ. թիվ 314 և 315 որոշումների պահանջների կատարման ստուգման արդյունքում հայտնաբերված խախտում: Հիմքը՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28 հոդված:	Տուգանք՝ 20,032,700 ՀՀ դրամ Պարտավորությունն ամբողջությամբ կատարված է
10.	25.04.2006թ. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն	Բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման արդյունքում շահութահարկի և ԱԱՀ-ի գումարի ավելացում: Հիմքը՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25, 27 հոդվածներ:	Լրացուցիչ գանձվող հարկի գումար՝ 15,407,800 ՀՀ դրամ Տուգանք՝ 9,634,700 ՀՀ դրամ Պարտավորությունն ամբողջությամբ կատարված է
11.	22.05.2006թ. ՀՀ աշխատանքի պետական տեսչություն	ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջների խախտում: Հիմքը՝ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 471 հոդված:	Տուգանք՝ 100,000 ՀՀ դրամ Պարտավորությունն ամբողջությամբ կատարված է
12.	20.09.2006թ. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն	ՀՀ կառավարության 31.07.1997թ. թիվ 314 որոշման պահանջների խախտում: Հիմքը՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28 հոդված:	Տուգանք՝ 2,003,100 ՀՀ դրամ Պարտավորությունն ամբողջությամբ կատարված է

2004-2006թթ. Թողարկողի նկատմամբ դատարանի, պետական իշխանության լիազորություններ իրականացնող այլ մարմինների կողմից չեն կիրառվել այլ պատասխանատվության միջոցներ: Թողարկողը չունի շարունակվող դատավարություններ:

7.3. Թողարկողը շրջակա միջավայրի աղտոտման հետ կապված որևէ խնդիր չունի: ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից ամեն տարի անցկացվում են սանիտարական նորմերի համապատասխանության ստուգումներ, ինչի արդյունքում որևէ խախտում չի հայտնաբերվել:

7.4. Փոխկապակցված անձի հետ կատարվել են հետևյալ գործարքները՝
ա) Թողարկողի և «Սթար Դիվայդ» ՓԲԸ-ի միջև 03.05.2006թ., 21.07.2006թ., 29.08.2006թ. և 01.11.2006թ. շարժական գույքի առուվաճառքի պայմանագրերով «Սթար Դիվայդ» ՓԲԸ-ին են վաճառվել «Սթար» սուպերմարկետներում տեղակայված հիմնական միջոցներ (սառնարաններ, խանութի կահույք, սայլակներ և զամբյուղներ, մուտքի դարպասներ, օդի կարգավորիչներ, դրամարկղեր և այլ շարժական գույք)՝ 370,854 հազ. դրամ ընդհանուր արժեքով (նշված գործարքը

կատարվել է «Սթար» սուպերմարկետների ցանցի շահագործումը «Սթար Դիվայդ» ՓԲԸ-ին փոխանցելու արդյունքում),

բ) Թողարկողի և «Սթար Դիվայդ» ՓԲԸ-ի միջև 21.07.2006թ. կնքված 2 պայմանագրերով «Սթար Դիվայդ» ՓԲԸ-ին են վաճառվել «Սթար» սուպերմարկետներում գտնվող (վաճառքի մեջ գտնվող) ապրանքներ 218,443 հազ. ընդհանուր արժեքով (նշված գործարքը կատարվել է «Սթար» սուպերմարկետների ցանցի շահագործումը «Սթար Դիվայդ» ՓԲԸ-ին փոխանցելու արդյունքում),

գ) «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպությունից (2005թ. հոկտեմբերի 27-ին կնքված թիվ 0510007 և 2004թ. դեկտեմբերի 8-ին կնքված թիվ 0412001 ֆինանսական վարձակալության պայմանագրերով) ստացված սուպերմարկետների համար 2 սարքավորումները 2006թ. հուլիսի 31-ին կնքված ենթավարձակալության պայմանագրով տրամադրվել են «Սթարի Դիվայդ» ՓԲԸ-ին (ամսական 2 613 հազ դրամ վարձավճարով): Ենթավարձակալության պայմանագիրը գործում է վարձակալության պայմանագրի ժամկետի ընթացքում և դադարում դրա դադարման պահից: Նշված սարքավորումների գտնվելու վայրերն են՝ ք. Երևան, Ամիրյան 13 և ք. Երևան, Տիգրան Մեծի 37 (ՍԹԱԲ սուպերմարկետներ) (նշված գործարքը կատարվել է «Սթար» սուպերմարկետների ցանցի շահագործումը «Սթար Դիվայդ» ՓԲԸ-ին փոխանցելու արդյունքում),

դ) Թողարկողի և «Սթար Դիվայդ» ՓԲԸ-ի միջև 08.08.2006թ. կնքված վարձակալության պայմանագրի համաձայն, Թողարկողի կողմից վարձակալվել է ք. Երևան Դավիթ Անհաղթի 21 հասցեում գտնվող նկուղային, 1-ին և 2-րդ հարկի տարածքներում համապատասխանաբար 477.3 ք.մ., 3 ք.մ. և 158 ք.մ մակերեսով տարածքներ՝ 4 տարի ժամկետով (սկսած 2006թ. նոյեմբերի 1-ից): Տարածքի ամսական վարձավճարի չափը կազմում է 400 000 ՀՀ դրամ,

ե) Թողարկողի մասնակից Հենրիկ Զախարյանցի և Թողարկողի միջև 03.01.2004թ. , 03.01.2005թ.-ին և 01.04.2006թ.-ին կնքվել են փոխառության պայմանագրեր: Փոխառությունները տրամադրվել են շրջանառու միջոցների համալրման նպատակով: Մասնավորապես՝

- Թողարկողի մասնակից Հենրիկ Զախարյանցի և Թողարկողի միջև 03.01.2004թ. փոխառության պայմանագրով տրամադրվել է 2,183,767 հազ. դրամի չափով անտոկոս փոխառություններ մինչև 1 տարի մարման ժամկետով: Նշված պայմանագիրը գործողության մեջ է եղել մինչև 31.12.2004թ.-ը: Առ 31.12.2004թ. դրությամբ Թողարկողի փոխառության գծով պարտքը Հենրիկ Զախարյանցի նկատմամբ կազմել է 143,762 հազ դրամ:

- Թողարկողի մասնակից Հենրիկ Զախարյանցի և Թողարկողի միջև 03.01.2005թ. փոխառության պայմանագրով տրամադրվել է 1,862,049 հազ դրամի չափով անտոկոս փոխառություններ մինչև 1 տարի մարման ժամկետով: Նշված պայմանագիրը գործողության մեջ է եղել մինչև 31.12.2005թ.-ը: Առ 31.12.2005թ. դրությամբ Թողարկողի փոխառությունների գծով Հենրիկ Զախարյանցի նկատմամբ պարտավորությունը ամբողջությամբ մարվել է:

- Թողարկողի մասնակից Հենրիկ Զախարյանցի և Թողարկողի միջև 01.04.2006թ. փոխառության պայմանագրով տրամադրվել է 135,884 հազ դրամի չափով անտոկոս փոխառություններ մինչև 1 տարի մարման ժամկետով: Նշված պայմանագիրը գործողության մեջ է եղել մինչև 31.12.2006թ.-ը: Առ 31.12.2006թ. դրությամբ Թողարկողի փոխառությունների գծով Հենրիկ Զախարյանցի նկատմամբ պարտավորությունը ամբողջությամբ մարվել է:

Թողարկողը շարունակում է մնալ Սթար սուպերմարկետների ցանցի խոշոր մատակարարը, հետևաբար մատակարարման բոլոր գործարքները կատարվում են Թողարկողի բնականոն գործունեության շրջանակում և դրանց վերաբերյալ տեղեկությունները սույն մասում չեն բացահայտված: Ավելին, նշված խանութների ցանցի զարգացման ու ընդլայնման արդյունքում Թողարկողը ակնկալում է ավելացնել ապրանքների մատակարարման ծավալները:

Թողարկողի կողմից չի իրականացվել այլ ակտիվների ձեռքբերման, վաճառքի, կամ օգտագործման իրավունքի փոխանցման այնպիսի գործարք, որի կողմերից մեկը թողարկողի կառավարմանը մասնակցող անձ է, նրա ընտանիքի անդամ, բաժնային արժեթղթերի նշանակալից սեփականատեր կամ թողարկողի հետ փոխկապակցված անձ:

7.5. Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ծավալը կազմում է 350,000,000 ՀՀ դրամ, որը կազմում է Թողարկողի ակտիվների 11%-ը: Գործարքի վերաբերյալ մանրամասները ներկայացված են 9-րդ գլխում:

7.6. Թողարկողը չունի այնպիսի պատվերներ, որոնք չեն կարող կատարվել առաջիկա մեկ տարվա ընթացքում:

ԳԼՈՒԽ. 8. Տեղեկություններ թողարկողի նախատեսվող գործունեության մասին

8.1. Թողարկողի ապագա գործունեության ծրագրերի վերաբերյալ տեղեկություններ.

8.1.1. Թողարկողն առաջիկայում նախատեսում է ընդլայնել իր գործունեությունը հետևյալ ուղղություններով.

Բիելլա մսամթերքի վերամշակում և արտադրություն. Ներկայումս Թողարկողի արտադրական կարողությունները թույլ են տալիս արտադրել օրական 2 տոննա/հերթափոխ (tons/shift) երշիկեղեն: 2007 թվականին Թողարկողը նախատեսում է ընդլայնել իր արտադրական հնարավորությունները՝ հասցնելով այն մինչև 20 տոննայի: Բացի այդ, Թողարկողի կողմից նախատեսվում է նաև արտադրել և առաջարկել մսամթերքի նոր տեսականի:

Մսամթերքի արտադրությամբ զբաղվելու նպատակով ստեղծվել է առանձին իրավաբանական անձ («ՆԱՏՖՈՒԴ» ընկերությունը), որը զբաղվելու է միայն մսամթերքի արտադրությամբ և որին ամբողջությամբ փոխանցվելու է Թողարկողի կողմից իրականացվող մսամթերքի արտադրության գործունեությունը: Նախագծի համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները կազմում են շուրջ 12.000.000 ԱՄՆ դոլար, որը հիմնականում ուղղվելու է նոր սարքավորումների, արտադրական տարածքների ձեռքբերմանը, նոր արտադրատեսակների նախագծման աշխատանքների իրականացմանը: Նախագիծն այժմ իրականացման փուլում է:

Կոմֆորտ խանութների ցանց (կենցաղային տեխնիկայի վաճառք). 2007 թվականի ընթացքում Թողարկողը նախատեսում է ավելացնել կենցաղային տեխնիկայի և էլեկտրոնիկայի ներմուծման ծավալները: Դրա հիման վրա նախատեսվում է նաև նոր խանութների տարածքների ձեռքբերում և վարձակալություն: 2007թ. նախագծի իրականացմանն է ուղղվելու շուրջ 240.000 ԱՄՆ դոլար:

SFC և AFC fast food. 2007 թվականին նախատեսվում է նաև SFC Express ցանցի ընդլայնում, ինչի նպատակով Թողարկողը ծրագրել է ձեռք բերել և վարձակալել համապատասխանաբար 2 և 4 նոր տարածքներ: Ծրագիրն արդեն իսկ իրականացման փուլում է գտնվում: 2007-ին նախագծի իրականացմանն է ուղղվելու ընդհանուր առմամբ շուրջ 800.000 ԱՄՆ դոլարի ներդրում:

Բացի գործունեության վերոնշյալ ուղղությունների ընդլայնումը, Թողարկողը նախատեսում է նաև առաջիկայում բիզնեսի նոր ոլորտ մուտք գործել, այն է՝ **գործարկել սրճարանների ցանց (coffee house)**, ինչը նախատեսվում է իրականացնել ճանաչված ապրանքանիշերի ֆրանչայզինգի միջոցով: Այդ նպատակով 2007թ. սկզբին բանակցություններ են վարվել այնպիսի ճանաչված ապրանքանիշերի ներկայացուցիչների հետ, ինչպիսիք են՝ Coffee Republic, Segafredo Zanetti, Testa Rossa և այլն: Նախնական բանակցությունների արդյունքում որոշում է ընդունվել համագործակցել Segafredo Zanetti ապրանքանիշը ներկայացնող ընկերության հետ: 2007 թվականին նախագծի իրականացմանն է նախատեսվում ուղղել 248.000 ԱՄՆ դոլարի ներդրումներ:

8.1.2. Թողարկողն իր արտադրանքն ու ծառայություններն իրացնում է մրցակցային շուկաներում, որտեղ առկա են ներմուծվող և արտադրվող բազմաթիվ համանման արտադրատեսակներ: Այս առումով որպես իրացման վրա ազդող հնարավոր բացասական գործոններ կարելի է առանձնացնել մրցակիցների կողմից առաջարկվող ապրանքների գների փոփոխությունները, նոր մրցակիցների ի հայտ գալը, մաքսատուրքերի փոփոխությունը և այլն:

8.2. Թողարկողը չի նախատեսում ստանձնել այնպիսի պարտավորություններ, որոնք կարող են բացասաբար ազդել իր հետագա գործունեության վրա:

8.3. Թողարկողի մրցակիցների վերաբերյալ ամբողջական տեղեկությունները ներկայացված են նախորդ գլխում:

8.4. Թողարկողը 2007 թվականի ընթացքում չի նախատեսում գիտահետազոտական և փորձարարական-կոնստրուկտորական աշխատանքների իրականացում:

ԳԼՈՒԽ 9. Թողարկվող (առաջարկվող) արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ

9.1. Պարտատոմսերի թողարկման (տեղաբաշխման) մասին տեղեկություններ.

9.1.1. Թողարկողի կողմից սույն ազդագրի շրջանակում թողարկվում են անվանական ոչ փաստաթղթային արժեկտրոնային պարտատոմսեր:

9.1.2. Պարտատոմսերի հաշվառումն իրականացվելու է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպությունում:

9.1.3. Թողարկման ընդհանուր ծավալը 350,000, 000 (երեք հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ է:

9.1.4. Տեղաբաշխվող պարտատոմսերի քանակը 7,000 (յոթ հազար) հատ է:

9.1.5. Սեկ պարտատոմսի անվանական արժեքն է 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

9.1.6. Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ պարտատոմսերի սեփականատերերի համար սահմանված են հետևյալ իրավունքները՝

1. ստանալ պարտատոմսերով նախատեսված արժեկտրոնները և մարման գումարը,
2. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնների և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ստանալ մարման ենթակա գումարի 0.1%-ի չափով տույժ,
3. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենքով թույլատրվող գործողություններ,
4. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով (սնանկ ճանաչվելու արդյունքում) դատական կարգով լուծարման դեպքում օգտվել պարտատիրոջը օրենքով վերապահված իրավունքներից,
5. տեղաբաշխման ավարտից հետո իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ֆոնդային բորսայում ցուցակված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով,
6. գրավադրել պարտատոմսերը օրենքով սահմանված կարգով,
7. Թողարկողի՝ իր կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում 19.06.2007թ. կնքված Երաշխավորության պայմանագրով Թողարկողի մասնակից Հենրիկ Ջախարյանցին (ՀՀ, ք.Բյուրեղավան, 16 շենք, բն. 9 հացեով) դիմել և նրանից ստանալ Թողարկողի կողմից վճարման ենթակա ողջ գումարը, որը Թողարկողը չի կարողացել վճարել, և որը հաշվարկվել է համաձայն 19.06.2007թ. Թողարկողի մասնակիցների արտահերթ ժողովի կողմից հաստատված Պարտատոմսերի պայմանների (ներառյալ տոկոսները, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը և Թողարկողի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած այլ վնասները):
8. Օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

9.1.7. Թողարկվող պարտատոմսերը փոխարկելի չեն:

9.1.8. Պարտատոմսերի մարումն իրականացվում է անվանական արժեքով՝ ՀՀ դրամով: Պարտատոմսերի մարման օր է համարվում տեղաբաշխումը սկսելու օրվան հաջորդող 18-րդ ամսվա համապատասխան օրը (եթե նշված օրը աշխատանքային օր չէ, ապա դրան հաջորդող աշխատանքային օրը): Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի փակման օր է համարվում պարտատոմսերի մարման օրը, իսկ պարտատոմսերի մարման գումարները վճարվում են պարտատոմսերի սեփականատերերին ռեեստրի փակման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ փակման օրվա դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Թողարկողը պարտավորվում է մինչև պարտատոմսերի մարման օրը հաշվարկային բանկում բացված հատուկ հաշվի վրա կուտակել պարտատոմսերի մարման համար անհրաժեշտ դրամական միջոցները, ինչպես նաև հաշվարկային բանկ ներկայացնել մարման գումարներ ստացող անձանց անհրաժեշտ տվյալները:

Հաշվարկային բանկը մարման գումարները վճարում է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

Սահմանված ժամկետում պարտավորությունները չկատարելու դեպքում յուրաքանչյուր ուշացրած օրվա համար Թողարկողը պարտավորվում է վճարել մարման ենթակա գումարի 0.1%-ի չափով տույժ:

9.1.9. Պարտատոմսերի թողարկման մասին որոշումն ընդունվել է 2007թ. հունիսի 19-ին:

Պարտատոմսերի թողարկման մասին որոշումն ընդունող մարմինն է Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովը:

Պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև Պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ որևէ սահմանափակումներ չկան:

9.1.10. Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն իրականացնելու է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպությունը: Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ք, հեռ.՝ (+374 10) 566-446, 520-978, www.cda.am:

9.1.11. Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսվում է պարտատոմսերի գրանցման հայտարարագրի գրանցման օրվան հաջորդող հինգերորդ աշխատանքային օրը:

9.1.12. Պարտատոմսերի տեղաբաշխումն ավարտվում է տեղաբաշխումը սկսելու օրվանից 10 աշխատանքային օր հետո:

9.1.13. Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովված է Թողարկողի ընդհանուր գույքով և այլ ակտիվներով: Որպես լրացուցիչ ապահովության միջոց Թողարկողն օգտագործում է իր մասնակցի՝ Հենրիկ Չախարյանցի (հասցե՝ ՀՀ, ք.Բյուրեղավան, 16 շենք, բն. 9) կողմից տրված երաշխավորությունը (երաշխավորության պայմանագիրը կնքվել է 19.06.2007թ.): Ընդ որում, սեփականության իրավունքով պարտատոմսեր ձեռք բերած յուրաքանչյուր ոք համարվում է երաշխավորության պայմանագրին միացած այն պահին, երբ ստորագրում է ցանկացած այնպիսի փաստաթուղթ, որն օրինական կերպով հավաստում է նրա կողմից որպես սեփականություն պարտատոմսեր ձեռք բերելու փաստը:

9.1.14. Պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Q-Q = N / (1 + t * R / m) * (c * \sum 1 / (1 + R)^{j-1} + 1 / (1 + R)^{n-1})$$

- որտեղ՝
- Q-Q – պարտատոմսի տեղաբաշխման գինն է,
 - N – պարտատոմսի անվանական արժեքն է,
 - R – պարտատոմսի դիմաց վճարվող կիսամյակային տոկոսադրույքի բացարձակ արժեքն է,
 - t – մինչև տվյալ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակն է,
 - m – ընթացիկ կիսամյակում ընդգրկված օրերի քանակն է,
 - c – կիսամյակային վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է,
 - n – արժեկտրոնների վճարումների քանակն է,
 - j – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոփոխվում է մինչև տվյալ պահը մնացած արժեկտրոնների վճարումների քանակը:

Տեղաբաշխվող պարտատոմսերը բաժնային չեն և փոխարկելի չեն:

Տեղաբաշխողների կողմից պարտատոմսերի դիմաց վճարումները կատարվում են ՀՀ դրամով՝ մինչև պարտատոմսերի տեղաբաշխման ավարտի օրը: Վճարումներն ընդունվելու են անկանխիկ ձևով՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված **25000103900820** բանկային հաշվին փոխանցումների միջոցով:

9.1.15. Թողարկողի կողմից վաճառվում է 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով 7,000 (յոթ հազար) հատ պարտատոմս, որոնց տեղաբաշխման գինը որոշվում է 9.1.14. կետում նշված բանաձևով: Տեղաբաշխումն իրականացվում է երաշխավորված եղանակով, որի համար Թողարկողը տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքի 0.5%-ի չափով պարգևատրում է տեղաբաշխողներին: Երաշխավորված տեղաբաշխում իրականացնելու կապակցությամբ Թողարկողը «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ կնքել է երաշխավորված տեղաբաշխում կազմակերպելու մասին պայմանագիր, իսկ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի, «Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ-ի և «Ֆյուչըր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ-ի հետ 29.06.2007թ կնքել է տեղաբաշխողների խումբ ստեղծելու մասին պայմանագիր: Տեղաբաշխման խմբում ընդգրկված անձանց վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում՝

Ֆիրմային անվանումները	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	«Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ	«Ֆյուչըր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ
Կազմակերպական իրավական ձևը	Փակ բաժնետիրական ընկերություն	Փակ բաժնետիրական ընկերություն	Բաց բաժնետիրական ընկերություն	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Փոստային հասցեն և կապի միջոցները	ՀՀ, ք. Երևան 0010, Խանջյան 13/2, հեռ. 52-95-93, e-mail: info@armswissbank.am , www.armswissbank.am	ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Մանուկյան 26/1 Հեռ. 54-54-52, 56-92-48, e-mail: post@conversebank.am , www.conversebank.am	ՀՀ, ք. Երևան, 0015, Պարոնյան 21/1 հեռ. 59-14-00, e-mail: info@armdb.com , www.armdb.com	ՀՀ, ք. Երևան, Այգեճորի 69, բն. 20, Հեռ. (093) 49 09 19
Չեռք բերման ծավալը և Պարգևատրման չափը	3500 հատ պարտատոմս Տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր ծավալի 0.2%-ի չափով (որպես Գլխավոր տեղաբաշխող) և իր կողմից ձեռք բերվող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքի 0.3%-ի չափով:	1500 հատ պարտատոմս որպես տեղաբաշխման խմբի անդամ՝ իր կողմից ձեռք բերվող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքի 0.3%-ի չափով:	1000 հատ պարտատոմս որպես տեղաբաշխման խմբի անդամ՝ իր կողմից ձեռք բերվող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքի 0.3%-ի չափով:	1000 հատ պարտատոմս որպես տեղաբաշխման խմբի անդամ՝ իր կողմից ձեռք բերվող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքի 0.3%-ի չափով:
Նրանց կողմից առաջարկվող գինը և քանակը	Պարտատոմսի տեղաբաշխման գինը որոշվում է 16.1.14. կետով սահմանված բանաձևով Վաճառքի ենթակա քանակը՝ 1000 հատ:	Չի նախատեսվում	Չի նախատեսվում	Չի նախատեսվում

Պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում շահագրգիռ ներդրողները կարող են ձեռք բերել պարտատոմսեր միայն «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում՝ նրա կողմից պարտատոմսերը ձեռք բերելուց և սույն ազդագրի ստանալուց առնվազն երեսուն ժամ հետո համապատասխան առուվաճառքի պայմանագիր կնքելու միջոցով:

9.1.16. Թողարկողի բաժնային արժեթղթերի նշանակալից սեփականատերերը, փոխկապակցված անձինք, ինչպես նաև կառավարմանը մասնակցող անձինք չեն պատրաստվում սույն ազդագրի օգտագործմամբ պարտատոմսեր գնել կամ վաճառել:

9.1.17. Պարտատոմսերի տեղաբաշխումից ստացվող եկամուտը, հանած պարտատոմսերի թողարկմանն առնչվող ծախսերի չափը, նախնական հաշվարկներով կազմելու է 344,732,800 ՀՀ դրամ:

Պարտատոմսերի տեղաբաշխումից ստացվող միջոցները նախատեսվում է օգտագործել սրճարանների ցանցի գործարկման և պարտքի վերաֆինանսավորման նպատակներով: Մասնավորապես՝

- պարտքի վերակառուցում (վարկերի վերաֆինանսավորում)՝ 539,714 եվրոյին համարժեք 248,187,483 ՀՀ դրամ,
- սրճարանների ցանցի (coffee house) գործարկում՝ 84,300,000 ՀՀ դրամ,
- շրջանառու միջոցների համալրում 17, 512,517 ՀՀ դրամ:

9.1.18. Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է տեղաբաշխման առաջին օրվա ընթացքում անվանական արժեքով, իսկ մնացած օրերի համար տեղաբաշխման գինը որոշվելու է 9.1.14. կետով սահմանված բանաձևով: Պարտատոմսերի դիմաց նախատեսվում է վճարել արժեկտրոնային եկամուտ՝ տարեկան 10.5% տոկոսադրույքով: Արժեկտրոնները (տոկոսագումարները) վճարվում են կիսամյակային պարբերականությամբ՝ ՀՀ դրամով, պարտատոմսի անվանական արժեքի 5.25 տոկոսի չափով:

Արժեկտրոնները (տոկոսագումարները) վճարվում են պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի փակման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն փակման օրվա դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը): Ռեեստրի փակման օրերն են հանդիսանում տեղաբաշխման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ և 18-րդ ամիսների համապատասխան օրերը:

Արժեկտրոնները վճարվում են անկանխիկ ձևով՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից, որը համապատասխան գումարները Թողարկողի հաշվից փոխանցում է սեփականատերերի համապատասխան բանկային հաշիվներին:

Պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում պարտավորությունները չկատարելու դեպքում Թողարկողը յուրաքանչյուր ուշացրած օրվա համար պարտավորվում է վճարել մարման ենթակա գումարի 0.1%-ի չափով տույժ:

9.1.19. Պարտատոմսերում ներդրում կատարող անձը եկամուտ կարող է ստանալ հետևյալ դեպքերում՝

- պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից,
 - մինչև մարումը վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (կապիտալի հավելում):
- Թողարկողի պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտահարկով (ֆիզիկական անձանց համար):

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում ՀՀ-ում ստեղծված կազմակերպությունները և ոչ ռեզիդենտները (օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները եւ դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները): Ընդ որում վերջիններիս համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և «Շահութահարկի

մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Շահութահարկի գումարը հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 20 տոկոս դրույքաչափով:

Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար շահութահարկը հաշվարկվում է այլ դրույքաչափով: Այսպես՝ եթե ոչ ռեզիդենտը հայաստանյան արքյուրներից ստանում է պասիվ եկամուտներ (տոկոսներ, կապիտալի հավելած և այլն), ապա նրա հարկային գործակալը պարտավոր է գանձել շահութահարկ՝ 10 տոկոս դրույքաչափով:

Հայաստանի Հանրապետությունում եկամտահարկ են վճարում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է: Պարտատոմսերից ստացված եկամուտները՝ կապիտալի հավելածից, ենթակա չեն հարկման, իսկ տոկոսները հաշվառվում են համախառն եկամտում և հարկվում են 10 տոկոս դրույքաչափով: Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց, ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հարկային գործակալ հանդես է գալիս Թողարկողը:

9.1.20. Տեղաբաշխման ավարտից հետո երկրորդային շուկայում պարտատոմսերի շրջանառությունը (պարտատոմսերով գործարքների կատարումը) կազմակերպվում է արտաբորսայում, իսկ Հայաստանի ֆոնդային բորսայում՝ վերջինիս կանոններով սահմանված կարգով ցուցակվելու պահից նաև Հայաստանի ֆոնդային բորսայում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9.1.21. Պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվում է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպությունում կամ օրենքով սահմանված կարգով լիցենզավորված այլ պահառուի մոտ: Պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է ՀՀ օրենսդրությամբ և պահառուի ներքին կանոնակարգերով սահմանված կարգով:

9.1.22. Օտարերկրյա ներդրողների կողմից տվյալ պարտատոմսերով կատարվող գործառնություններն առանձնահատկություններ չունեն, բացառությամբ սույն գլխի 9.1.19 կետում նշված հարկային առանձնահատկություններից:

ՆԵՐԴՐՈՂԸ, ԾԱՆՈԹԱՆԱԼՈՎ ՍՈՒՅՆ ԱԶԴԱԳՐԻՆ, ՊԵՏՔ Է ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԻ ՏՎՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԻՍԿԸ՝ ՄԻՆՉԵՎ ՉԵՌԸ ԲԵՐՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ: